



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



09
03

03



A 68 DEC 2010

Մ . Տ . Շ Խ Ա

Ք Ի Ւ Ր Տ Պ Ե Կ

Բ . Հ Ա Տ Ո Ր Ե Կ

Ա Ր Ա Մ Ը

Գ Ե Ր Հ Ա Յ - Ք Ր Դ Ա Կ Ա Ն Կ Ե Կ Ե Կ



Բ Ա Ր Ի Զ

1905

# ՔԻՒՐՏ ՊԵԿ

Բ. ՀԱՏՈՐԻԿ

01 JAN 2009

891,99

Ա-83

Ա. Տ. ՏԻՍ

ԱՆ.

Ա. Տ.

## ՔԻՒՐՏ ՊԵԿ


Բ. ՀԱՏՈՒԿ

ԱՐԱՄԸ

ԳՐԱԳՐ ՀԱՅ-ԳՐԴԱԿԱՆ ԿԱՆԱՔԵՐ

1001  
3139

Հ-5  
0-5



21.02.2013

27488

1894—95 թ. թ. Տաճկաց—Հայաստանում

Նահատակաժներին

Վշտակց սրակս բոլոր խորշերով  
Կը յարգեմ, զոչե՛ր, Զեր յիշատակը...  
Զեօ—որ Բըռնութեան առաջ ընկճւելով՝  
Փակեցիք կենաց Զեր նեղ դըռնակը, —  
Խորին յարգանքով, թողէք, Եշիրեմ  
Տկար գրիչիս Բ. երեխայրին...  
Բուռն զդաց մոռնքով Հանգիստ կը խնդրեմ  
Զեր բազմաչարչար Ա. Ոսկորներին...

Կենդանի—մեռեալ, աչ, Զեր Գամբարան  
Պիտի այցելեմ, առնե՞մ իմ կարօտ.  
Թէ՛ մի օր կասեն «Մարտիկ Տէրոյեան  
Զը հասաւ ըղձին, աչ, ննջեց Շոտ»...

# ՔԻՒՐՏ ՊԵԿ

ԳԾԵՐ ՀԱՅ - ՔՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

Բ. ՀԱՏՈՐԻԿ

## ԱՐԱՄԸ

I.

**Բ**ԱԼՈՒ քաղաքի հարաւ-արևմտեան  
կողմը կիյնայ Աշմուշատ կոչող զիւլախում-  
բը, ուր կը գտնի, իմիջի այլոց, և Նամա-  
րան հայաբնակ զիւղը, որ հաստատւած է  
Պաղինեան լերանց հիւսիսային ստորոտում,  
երկու հանդիպակաց բլուրների լանջերին  
վրայ: Նամարանը շրջապատւած է գեղեցիկ  
պարտէզներով ու անվերջ այգիներով, որոնք  
հեռւէն Նամարանին մի սիրուն, անտառային  
տեսք կընծայեն:

Նամարան զիւղումն էր «մեծանուն Մե-

լիք Միսաքի գերդաստանը, որի ոչ հարըստութեանը շափ կար, ոչ հողերին՝ սահման, ոչ նրա տունը գնացող—եկող՝ ուտող—խմողին—թիւ և ոչ էլ նրա հանգստութիւնը վրդովող որ և է հանգամանք», ինչպէս կը վկայեն ժամանակակից ծերունիները։

**Մելիք Միսաքենք Նամարանում,** իրենց կեանքով, ձեզ կը յիշեցնէին Հայր Աբրահամը, այս զանազանութեամբ, որ մինչդեռ վերջինս խաշնարածութեան ասպարիզում կը փայլէր՝ **Մելիք Միսաքենք «Համիա ունջըրար»** էին։ Տանիեակ հազարատոր տեսեազին (օրավար) հոդ ունէին նոքա, մեծաւ մասամբ վարելահող, որի մի խոշորիկ մասը նրանք վարձու կուտային զրուցի կապալառու—հողագործների (*Արեհճառօրն*), որով մի պատկառելի զումար տարէց տարի կը բարդւէր Մելիք Միսաքի կարողութեան վըրայ։ Խակ իր մշակած մասին վրայ Մելիք Միսաքը կաշխատցնէր մօտ 200—250 հոգի, որոնց կէուն աւելին վարձու բանուորներ էին՝ Նամարան և այլ հայաբնակ գիւղերէ։

**Մելիք Միսաք Միսաքենց տունը,** որ մօտ 2 տեսեազին տեղ կը գրաւէր Նամարան գիւղի ծայրումը, երկյարկանի և օթեւ կաշատ մի շինութիւն էր։ Տունը ըրջապա-

տող հրաշալի պարտէղին չորս կողմը կը բոլորէր՝ մի մարդահասակ բարձրութեամբ՝ քարաշէն պարիսպը, որի արևելեան և հիւսիսային կողմերում բացւած էին մի—մի կամարակապ զու։ Այդ գոներէն առաջինը կը ծառայէր մարդոց ելումուտին, իսկ միւսը՝ բազմաթիւ կենդանեաց։

Թէ՛ տան բակին մէջ և թէ պարտէղի մի քանի մասերում բարուկիր աղբիւրներէն կը վազէին առատօրէն զուլանլ, ախորժահամ ջրեր, որոնք հիւսիսային դրան ները միաւնալով՝ մի մեծ վտակ կը կազմէին և կերթային գիւղի ներքեւի ջրաղացները դարձնելու և արտերը ոռոգելու։ Արտեր, որոնք Մայր Բնութեան անսպառ պարզների և հայ գեղջուկի պատմական ժրաջանութեան շնորհիւ «կաթ ու մեղր» կարտաղրէին։ Լստորում և երջանիկ էին Հայ գիւղացիք Աշմուշատուր։

**Այս,** համեմատելով Տաճկա—Հայաստանի այլ կողմերի հետ՝ թիւ, թոփէ, Նամարան, Մեղրաբերդ (Պալ—Գայեա), Վարդենիկ և այլ աշմուշատեան հայ գիւղերի ժողովուրովը կարելի էր երջանիկ համարել։ Որովհետեւ այդ գիւղերը լինելով զուտ հայաբնակ և հետո բրդական աշիբաթ ցեղերէն ենթա-

կայ չեխ վերջինների անտանելի հարստացարութեանց :

Մանաւանդ Մելիք Միսարի գերզաստանը, որ նոյն իսկ «ընդհանուր աղէտների» ժամանակ—որպիսիք էին՝ Տոլեցոց ապստամբութիւնը, Օշինցոց և Պահոցոց ընդհանուր ցեղային կոփները են, որոնց ընթացքում Աշմուշատի հայ գիւղերն էլ զգալի վնասներ կրեցին. — շնորհիւ նահապետի բարոյական աղղեցութեան անվնաս դուրս կը գար:

## II.

Աշմուշատի և Բալու քաղաքի միջն կիյայ, Արածանիի ձախ ափին վրայ, «Մաշոյին Դիրը». — մի գեղեցիկ սարահարթ՝ 45 վերստաչափ երկարութեամբ արևելքին արեմուտք և 40 վերստաչափ լայնութեամբ հիւսիսին հարաւ:

Այդ սարահարթին, որ միակ ճանապարհն է Բալուէն Աշմուշատ գնալու համար, զետիքի նամարան կը դիմէին երկու քիւրտ արշակութիւնի մասունքի, մի քրտուհի և էջի վրայ բեռցած մի բեռ «քրտու լամուքներ» — երեխերք:

Մի երկրորդ էլ կը տանէր քիւրտ ընտանիքին տնային բոլոր ծանրացքը: — 1—2 մաղ, 1—2 ժանգուտած ու միի մէջ կորած պղնձէ խաղիին, 1 հատ փայտէ տաշտ, որի մէջ քրտուհին երբեմն հացի խմորը կը շաղէր, երբեմն լամուքը կը լւար, երբեմն լուրացած տրեխները նրա մէջ կը թրջէր, կը կակացնէր... 1—2 կը տոր «հալհած» փսխաթներ ու կապերտների կտորւանք որոնք կը կը ծառայէին անկողնի տեղ: 1 հատ լաւաշ թխելու մրուտած «սաձ», 3—4 հատ շերեփի մեծութեամբ պոչատ գտալ և վերջապէս խորալածի համար մի քանի երկամբէ շամփուր: — Ահա այդ կենդանու թանգազին բեռը, որ գաղթական քիւրտ ընտանիքի «եղած—չեղածն» էր:

Երկու տղամարդիկը, չ'նայած իրենց պատառոտոն հագուստներին և ոտքերի բորբկութեանը՝ զինւած էին ոտքէ զլուխ շատ լաւ: Նրանցմէ իւրաքանչիւրը կը կրէր մի շէշիան—հրացան, մի կեռ սուր, մի կայծուտ ատրճանակ, մի երկսայրի դաշոյն և մի թունաւոր նիզակ: Զանազան հուլունքներով զարդարւած և վառող, գնդակ, հրահան, կայծքար, արէթ, քրջեր և պատրաստի վիրա-

կապ (մուշամպա) լեցրած կաշեայ տոպրակաները ձգել էին ճաերէն և ամրացրել էին անութիներին ներքեւ:

Քրդուհին այն հալումն էր, որ Աստուած թշնամուս չի ցոյց տայ: Նա հագել էր մի աղտոտ, իր բնական ձերմակ զոյնը կորցրած, երկար շապիկ, որն այնքան կարկատաներ ունէր իր վրայ, որքան քրդուհին տարիք չունէր: Թեկերը, կուրծքը, զուխն ու ոտքերը մերկ եին և զանեցնելու չափ աղտոտ:

Հօ լամուքները իրենց մօրմէն լաւ գրութեան մէջ չէին, ոչ հագուստով, ոչ էլ մաքրութեամբ: Սակառների մէջէն կերեկին նրանց խոշոր զլուխները...

Հասնելով նաձարան զիւղը՝ քրդերը գիւղին Մելիք Միսարենց տունը և բակում ցած բերին էշերի բեռները: Մեծ տղամարդը առաց քրդուհուն.

— Քէյնէ, չես զէտ, վաճը խաղունոաքի եօվ նան ու հիւղի տէօվ պըտը... (Աղջիկ, ներս գնա ասս տիրուհուն, որ մի հաց և մի քիչ թշն տայ մեզ ուտելու):

Քրդուհին քարէ սանզուխքէն բարձրացաւ վեր — «այլանը» և համարձակ մօտեցաւ տանտիկնոջը, որ դաշտուրներին համար

կերակուր կեփէր ահազին կաթսայով, ու ասց նրան.

— Տիրուհի, Պղանի հիշրն ենք, մի քիչ ուտելիք տուր մեզ:

Տանտիկինը առանց երկար-բարակ մասձելու կանչեց իր մօտ՝ դաշտուրներին ձաշտանելու համար եկած հարսին և պատուիրեց կատարել քրդուհու խնդիրը:

### III.

Երեկոյեան ուշ ժամանակ նաճարանցի դաշտուրները դարձան զիւղ: Մելիք Միսարենը էլ համշերակ ծերերի և «Մելիք Տէրտէրին» — զիւղի քահանային հետ եկեղեցին զուրս գալով՝ հաւաքւեցան Մելիք Միսարենց տունը:

Հարսներն արգէն պատրաստել էին ընթրիքի սեղանը, որի շուրջը շարուեցան «Գեղզին Մեծաւորները» և քաղցր զրոյցներ անելով՝ սկսեցին ուտել-խմել: «Զարտախի» մի ուրիշ կողմում կընթրէին տան միւս տղամարդիկը՝ իրենց բանւորների և տասնեակ հիւրերի հետ:

Իսկ կինարմատները — որ դաշտում տը-  
ղոց հաւասար աշխատելով նոյնպէս յոզնած  
ու անօթի էին — պիտի սպասէին մինչև այր  
մարդոց ընթրել-վերջացնելը, որ այնուհետեւ  
իրենք էլ սեղան նստէին: «Եթէ կին մար-  
դը մանչուն հետ կամ առաջ սեղան նստի՝  
Աստուած կը բարկանայ»...

Երբ մեծաւորներն ընթրեցին վերկացան  
ցորեկին եկած քիւրտ տղամարդոցմէն մին  
ներկայացաւ Մելիք Միսարին և խորը գուշա-  
տաշով՝ կեցաւ մի կողմ:

— Ո՞վ ես, քիւրտ, և ի՞նչ կուզես, հար-  
ցուց Մելիք Միսարը:

— Ծառաներդ անգործ ու աղբատ մար-  
դիկ են, քեզ զուրպան, պատասխանեց քիւր-  
տը, — ձեզմէն պիտի խնդրենք, որ մեզ մի  
դործ տաք: Մենք քչոր ենք, աղա, ես, եղ-  
բայրս, կինս և 5 լակոաներ: Երեք չափա-  
հասներս լաւ կաշխատենք և կերած հացերս  
հարամ չենք աներ, արխային կացէք:

— Դու մեզ այն ասա, թէ որ տեղացի  
էք դուք:

— Մեր նախնիքը Ղամիշլուք գիւղէն ե-  
կել և հաստատել են Քուրմ գիւղում:

— Ղամիշլուքքն... Բայց Ղամիշլուքում  
երբ և իցէ բրդեր չեն եղել բնակւելիս:

— Աղա, գլխիդ մատաղ, մենք այդպէս  
ենք իմացած մեր մասին:

— Լաւ. հապա ի՞նչպէս է ձեր մակա-  
նունը:

— Մեզ կը կոչեն Փափաղ—օղլի, քեզ  
զուրպան, Փափաղ—օղլի:

— Իսկ երբ և իցէ զուք ունեցե՞լ էք ու-  
րիշ որիէ մականուն:

— Ոմանք (մեր զեղի հներէն) կասեն,  
որ մեր տոհմը մի ժամանակ կոչւելիս է ե-  
ղել Տէրտէրենք, ոմանք էլ թէ Վէրտան-  
Զատիկ:

Մելիքները լսելով վերջին խօսքերը՝ զար-  
մացած նայեցան երարու:

Տանտէրը շարունակեց իր հարց ու փոր-  
ձը:

— Դուք Ալի Պէկի տնէն էք:

— Պէկի (այս), աղա, Ալի Պէկի անէն  
ենք:

— Իսկ լուսահոգի Զորմրուք—Հանուսի  
իշե՞րն էք դուք:

— Ես ու եղբայրս (նա այժմ ձեր ծա-  
ռաներին հետ կ'ընթրէ) Նրա որդիքն ենք...

Քիւրդը մի ծանր ախ բաշեց սրտի խոր-  
քերէն և նրա խոզոր, արինակալած աչքե-  
րում երկացին մարդարտափայլ կաթիներ...

Մելիքներն էլ լոեցին՝ հոգեբուզիս հառաշանքներ արձակեղով...

Այդ միջոցին ներս մտաւ Մելիք Միսաքի ծառաներէն մին և քրդուն ընթրիքի հրաւիրեց։ Վերջինս անփոյթ կերպով ուսերը թափ տուաւ...»

— Գնա, ընթրէ և վերադարձիր, ասաց նրան Մելիքը։ Քիւրտը հեռացաւ։

#### IV.

— Վերան-Զատէ, մրմիջաց Մելիք Միսաքը։ — զիտէք ովքեր են զրանք։

— Ինչպէս չէ, ասաց մի ուրիշը։ Զամիշուրի վարդանեան գերգաստանն է այդ, որի մի հատւածը կէս զար առաջ քրդացւ, մնացածներն էլ Զէյնէլ և Ալի աշաների յայտնի ընդհարման զոհ գնացին։

— Այս, հաստատեց Մելիք Մուրատը. — հէնց վարդանեաններն են զրանք... Երբ Մելիք Խտօն ու իրեք որդիքը սպանեցան՝ այդ գերգաստանէն ճողովրածները ապաստանեցան յաղթով Ալին մօտ, ուր այդ

միջոցին կը մնար Մարտոն, այսինքն Մելիք խտօնի երեց որդին և Ալիի առևանդած աղջկայ՝ Թուրքանտայի հայրը... Մարտոն այսուհետեւ կոչւեցաւ Մրատօ և բոլոր իւրային ներով քրդացաւ... Նոյնպէս ինքնակամ քրդացան և ուրիշ շատ Ղամիզլուքցիներ ու անցան այս կամ այն քիւրտ ցեղին մէջ... Թյժմ միայն մականուններն են մնացել հայկական, այն էլ խիստ աղաւաղած, իսկ ուրտերը զարձել են մի-մի «գերեզման հայկական պատւի...»<sup>1</sup>)։

— Ցաւալի՛ երևոյթ, շնչացին նրանցմէ մի քանիսը։

— Այնու ամենայնիւ, ասաց Մելիք Միսաքը, — Պէտք է խնամբ տանել մեզ զիմողներին վրայ... Պէտք է պահել-պահպանել զրանց և ընտելացնել հալալ աշխատանքին... Այդպիսով թերևս մնուանան նոքա իրենց վայրագ հակումները և մի օր զգան, թէ ովքե՞ր են իրենք...»

1. «Հայկական պատւի գերեզման» Աշմուշատցաց բարեպառում կը նշանակէ «թշնամի Հայութեան»։



## V.

Կէս—զիշեր էր։ Մելիքները գեռ նստած  
կը խօսէին։ Այդիսն ու Ռէսօն էլ (այդպէս  
էին երկու քիւրտ աղամարդոց անունները)  
այդտեղ էին և փոփոխակի կը պատասխա-  
նէին իրենց զիշին տեղացող հարցերին։

— Սայիտ, կը հարցնէր Մելիք Միսարը,  
— զու կը յիշե՞ս քո լուսահոգի հօրը—Ալի  
պէկին։

— Ես գեռ երեխայ էի, քեզ զուրպան,  
երբ այն մեծ անբաղդութիւնը եկաւ մեր  
տան վրայ։

Բայց նա չ'կարողացաւ շարունակել։ Գառն  
յիշողութիւնները կ'ալեկոծէին խեղճ քրդու  
սիրառը... Նա ուխտել էր խօսք շբանալ ի-  
րենց «անցեալի» մասին։ Բայց Մելիք Մի-  
սարըն էր հետաքրքրւողը, որի հարցին չ'պա-  
տասխանել՝ Նաձարանէն հեռանալ կը նշա-  
նակեր։ Մինչդեռ նրանք մոտավրւել էին մի  
կերպ մնալ այդ զիւղում և մի կտոր հաց  
ճարել։ Նրա ակնարկած մեծ անբաղդութե-  
նէն յետոյ ոչ մի քիւրտ ցեղ իր մէջ չ'ը-  
պատապարեր քուրմ զիւղացի քրդու։ Մա-

նտւանդ երբ իմանային որ սրանք «պաւա-  
ճան» Ալի Պէկի սրգիքն են... օ՛, հաղար  
կտոր կանէին նրանց և զազանի կերակուր  
կը դարձնէին, որ մարդիկ հասկանային դա-  
շաճան բասի միտքը... Ուրեմն՝ միակ յոյ-  
սը Հայ զիւղն էր, ուր այդ ողորմելիները թե-  
րես կարողանային զլուխները դնելիք տեղ  
ճարել...»

Բայց, սատանի աշքը քօռանայ, նրանց  
բաղդէն հայ զիւղացիք էլ, կարծես, կը խոր-  
շէին նրանցմէ։ Ըստ որում շատ Հայ զիւ-  
ղեր մոտան նորա, բայց վանաւեցան։ Անու-  
ղոք ճակատազիքը մե ուրւականի նման ա-  
մեն մի քայլափոխում կը հետեւ նրանց և  
խեղճերը գատապարտւած էին կրելու իրենց  
«Հօր սխալ քայլի պատիժը...»

Այզակս հալածական նորա շատ զոներ  
բաղխեցին՝ առանց մէկի բացւելը տեսնել  
կարողանալու, Մինչև որ ի վերջոյ իմաւ-  
ցան «Նաձարանի Մեծ Մելիքի» մասին, որ  
շատ կը սիրեր «կեսկէսներին» — ինչպէս այդ  
կողմերում կանւանէին քրդացած հայերին։  
Եւ նրանք զիմեցին համբաւաւոր Մեծ Մե-  
լիք Միսարի օճաղը...»

— Իսկ զ՞ո՞ւ, Ռէսօն կը հարցնէր Մելիք  
Միսարը միւս քրդուն, որ գեռ այդտեղ էր։

— Ես աւելի փոքր էի, աչքիս լոյսը, գուցէ Սայհտը կարողանայ պատասխանել:

Ասաց Ռեսօն և պաղատական յանգով նայեցաւ եղբօրը:

— Ես այսքան զիտեմ, ասաց վերջինս, որ իմ հայրը (Աստուած ողորմի հոգուն) մի կարիճ տղամարդ է եղել: Իմ հերոս հայրը միշտ յաղթմել է, որ ցեղի գլու էլ որ նա պատերազմել է (ես այդ ուրիշներին եմ իմացել): Ողորմած հոգին շատ բարի և հեռատես մարդ է եղել, բայց մի քիչ փառաւէր: Նա մի անգամ բարեկամացել է Բարձր քաղաքի գայրմագամ Ռիշտի Պէկին հետ (Ալլահը ճէջինէմի փայ անէ անիրաւին ճանը, հիմի էլ այդ է զաւառապետը): Եւ երբ Օսմանյան ուզեց նուաճել Ցէրսիմի, Խուանի և իդոլի աշիրաթ—ցեղերին, որոնք չեին ցանկար հարկ վճարել Օսմանյալին, — այդ ատեն իմ հայրը (ախ, հայր, հայր, ի՞նչ ասեմ քեզ, հայր...)

Քրոռ աշքերը բոցավառւեցան աւելի և աւելի... նա սկսեց անհանգիստ շունչ առնել... Նոյն բանը կը կատարւէր և նրա եղբօր մէջ, որը՝ չ'կարսղանալով զսպել իր ծայրայեղ յուզմոնքը՝ մննչաց առիւծի նըման, մի հոգեբուզի հառաչանք արձակեց

և զլուխն առաւ ձեռքերին մէջ... Սայիաը շարօնակեց.

— Այդ ատեն հայրս կառաջնորդէր թուրքերին Տերսիմցոց և միւս ցեղերին դէմ... Թուրքերը խոստացել էին հօրս փաշայութեան հասցնել և շրջակայքի բոլոր քիւրտ ցեղերին վրայ մեծաւոր կարգել... Զի՞ր լինէր այդ անաքանդ փաշայութինը, որ մեղներկայ զրաւթեան չ'հասցնէր...: Աշիրաթներն յաղթեցին և հայրս զոհ գնաց իզուցոց ցեղապետի մարդակեր սրին... Այնուահետեւ աշիրաթները քար—քանդ արին մեր զիւզը... Ես լսել եմ, թէ ինչու սպաշտելի «աշյուները անհեծք են կարդացել փափազ—օղլիների տոհմի զլոյն...» Գիտէք արդեօք, ձեզ զարգան, ինչ սոսկալի բան է սէյիսի անէծքին ենթարկելը...: «Աէյիսի անիւծած տոհմը էլ երբ կարող է իր ճանն ազատել աշխարհի բոլոր չարիքներին և երկինքի գմանքին...» Աստուած իմ արիւնը խոնդ թշնամուն էլ չենթարկէ այդ «մեծ անբազութեան...»

Ըստ երկոյթին քիւրտը կուզէր կարելի եղածին շափ սառնութեամբ պատմել, բայց այդ չէր յաջողւէր նրան. նա յաճախ կը յուզւէր և այդ պահուն նրա անյողողող

ձայնը կոկորդումը կը խղզէր։ Առկայն այ-  
նու ամենայնիւ, քանի որ այդքան «բացւե-  
ցաւ», պէտք էր շարունակել և նա ասաց.

— Մեր առն կառավարութիւնը, այդ  
կոփների ընթացքում, յանձնւած է եղել իմ  
քեզի Մըստօին, որը շատ թոյլ մարդ է ե-  
ղել։ Զարմանալի՞ մարդ, զէնք գործածելու  
անգամ շնորհք չէ ունեցել, վառօղի ծխէն  
ու շէկ պողպատէն նապաստակի նման։  
վախնալիս է եղել... Գուք ասէք, ձեզ դուք-  
պան, այդպէս անհօգի մարդը ե՞րբ կարող  
է առն պահպանել, այն էլ առիւժանման  
աշխիների գէմ...։ Եւ Մըստօն ինկաւ՝ ա-  
ռաջին իսկ յարձակողի տէդին։ Այդպէս  
էլ պէտք էր, չէ՞ Մըստօի նման թոյլ ա-  
րարածներին...։

Մերիները լարւած ուշադրութեամբ կը լը-  
սէին նրան։ Աշխարհումն ոչինչ այնքան չի  
ոգևորեր քրդուն, որքան կտրին քրդու քա-  
ջագործութիւնների նկարագրելը և թոյլերին  
պախարակելը։ Անլեզուն անգամ, նրանց մէջ,  
այդ զէպէերում լեզու կերնէ և ինչպէս...։

— Իսկ մայրիկդ-Զումբութ հանումը ինչ  
եղաւ, հարցուց նորէն Մերիբը։

— Զումբութ հանումն էլ (ախ... մայրիկ  
նման, սուրբ կաթիղ փոխարէն թոյն կեր-

ցընէիր մեղ, որ այս օրը չ'տեսնէինք...)  
աներեւութացաւ... Ոչ ոք չ'գիտէր ինչ ե-  
ղաւ խեղճը. մարդիկ յետոյ իմացան «չար  
խապարը տեղ շմար»), որ մայրիկս թշնա-  
մու ձեռքն էր ինկել, իզոլցոց ցեղապետը  
յանձնել էր նրան իրենց սէյխտին, որը փառ-  
քավ ու պատրավ պահելիս է եղել իր տանը։  
Բայց Մայրիկս այնտեղ շատ քիչ է ապ-  
րել...։

Այդտեղ ընահատեց Սայիւն իր պատ-  
մութիւնը, որովհետեւ արտասուբը կը խեղ-  
դիր նրան և նա այլ ևս անկարող էր շա-  
րունակել։ Իսկ ասած, քրտերն այդ կոդմից  
լաւ են մեզմէ, ծնողասիրութեան զգացնուն-  
քը նրանցում խիստ զօրեղ է, այնպէս որ  
քիւրտ տղամարդը յամենայն զէպս պատ-  
րաստ է թէ կուզ իր կեանքը զոհելու՝ իր  
«Հօր և մօր քանզագին խարեր և յաշկտ  
անոնաւալի յիշատակի համար... որով-  
հետեւ ծնողասիրութիւննը մարդկային առա-  
քիմուրիւններէ զլիառորն է և այն որդին,  
որ չի սիրեր իր ծննդքը՝ նա մէկ խօսքով մարդ  
չէ... Շունեն էլա կրսիրկ իր մօրք...»։

Երկու եղբայրները երեխի նման կուզային՝  
իրենց հետ լացնելով միաժամանակ թէ՛ Մե-  
լիք Միսարին և թէ նրա համշիրակ հիւրե-  
րին։

Յայտնւեցաւ, որ Զումբութ հանումը մեւ սել էր գերութեան կապանքների մէջ՝ հեռու իր սիրելիներէն, հեռու իր հայրէնի և ընտանեկան օճազներէն, որ աւերակ էին դարձած... Նա մեռաւ՝ յիշելով իր ծագումը և անիծելով իր անբաղդութեան բռլոր հեղինակներին, անիծելով այն սարուկներին որոնք լծկանի կեանըը աղատութեան ճանապարհի վրայ հերոսաբար իյնալէ կը գերազասէին...:

## VI.

Թըթխմորը ինքնըստինքեան մի փոքր բան է, բայց նա ընդունակ է մակարդելու մի ամբողջ տաշտ խմօր ու նրա վրայ «Համբերել»։ Այլուս է և գաղափարական, գործելու եռանդ ու պատրաստակամութիւն ու նեցող մարզը։ Սա թէե մի անհատ է միայն, բայց կարող է գարակել ամբողջ գանձկարգեր ու գաղափարական համբերել նրանց վրայ։ Այնպէս որ այսօրւան քարացած, բարոյապէս մեռած հասարակութիւնը՝ վա-

ղը-միւս օր կարող է մարդկային թթխմութիւնիւ գաղափարականի գործունէութեան աղքեցութեան շնորհիւ բոլորովին կերպարանափոխել, վերակենդանանալ և գառնալ մի համակրելի տարր... Եւ այդ այն պատճառվ, որ ազնիւ Գաղափարը վարակիչ առողջութիւն է!»

Ասածիս իբրև ապացոյց կը բերեմ հետեւալ՝ իրական կեանըէ վերցրած փաստը, որ անմիջական կապ ունի «Բիւրտ Պէլի» պատմութեան ընթացքին հետ։

Մալխաս-աղան կամ Պարոն Թափառականը Ցածկա-Հայաստանի կ. քաղաքի համբաւաւոր Հայ հարուստ X. ի որդին էր, որ շնորհիւ նիւթական ապահովութեան և իր արտասովոր ընդունակութեան հնարաւութիւն ունեցաւ անցնիլ Ռուսաստան և կարճ ժամանակի ընթացքում պատրաստելով՝ մտաւ մի անւանի համալսարան։ Այսաեղ փայլուն յաջողութեամբ աւարտելով ուսման ընթացքը՝ ժամանակակից վարի հոգուն համապատասխան եռանկով տօգորեց իր տարաբարդ արինակիցներին ծառայելու գաղափարով։ Եւ նա՝ բեռնաւորւած Գիտութեան բաւական հարուստ պաշարով՝ վերագրածաւ Մայր-Հայրենիք, ուր տեսաւ իր օճազը

քանդւած բարբարոսութեան աւերիչ ճանկեռով...:

Նրա հայրը՝ բանտի խորբերում, շղթաների ծանրութեան տակ իր ամբողջ կարողութեան լրաբար զրաւելուն ականատես, իր ընտանեաց և մանաւանդ միակ դարիպ որպու քաղցրիկ տեսութեան կարօտ-հոգին աւանդած էր...:

Մայրը նոյնպէս՝ չղիմանալով անողս ճակատագրի քայբայիչ հարւածներին՝ հիւծւեց որ-աւուր և առանց իր «անուշ պալայի» երեսը տեսնելու բաղզին արժանանալու փակեց իր աշքերը՝ օտարի զրանը թողնելով իր երկու անշափահաս աղջիկներին...:

Վերջիններիս աւելի լաւ բազզ վիճակւած չէր, քան իրենց ծնողացը։ Երեկուան փափուկ, նազելի արարածներին այսօր գառել էին «չմես օտարի գերուհիները և ստիպւած էին ծառայել նրանց... Մինչև որ ժամանակին առաջ վիճակւեց նրանց վերջնականապէս պատկանիլ մի-մի արիւնակից երի տասարգի, որպէս ամուսին...»

Մի խօսքով կ.-ում չէր մնացած միքան, որ Մալխասին յիշեցնէր իրենց նախ կին փայլուն հասարակական զիրքը, բացի իրենց նախկին տնին, որ կը շարունակէր

մնալ կանգուն և որը, սակայն, այժմ միթուրքի օրինաւոր սեպհականութիւնը (՝) կը կազմէր։

Միւս կողմէն համոզւած լինելով, որ «Մարգարէ յիւրում զաւասի պատիւ ոչ ունի», նա վճաբց անցնիլ Զորբորդ Հայք, որաեղի հայերն էլ կ.-ի նման ընկղմած էին թանձր խաւարի մէջ, և հետեւաբար, Լոյսի մեծ կարիք կար այնտեղ։

Հրամեշտ տալով իր թշւառ ծննդավայրին՝ Նա Քղիի վրայով անցաւ Բալու և պյտեղ էլ հիմբը ձգեց իր եռանդուն գործունէութեան։

— Ճանձնալ ինքնիրեն, տեսնել իր վերքերը, տեղի չ'տալ փոտած հասկացողուրիւնների և պատերազմ հրատարակել սորկական շուրջիւն ստեղծող երևոյթների դեմ։ Ահա Պ. թափառականի ամբողջ քարոզութիւնների բայխնդակութիւնը բալոււմ և Բալուի շրջակայ հայաբնակ զիւղերում։

Թու որքան խոչընդուների պէտք է հանգիպէր այդ քարոզաւթիւնների հեղինակը։ — այդ հասկանալի է, Բայց Պ. թափառականը այնպիսի երկաթի հաստատակամութեան տէր մարդ էր, որ առ ոչինչ համարելով այդ բոլոր խոչընդուները՝ նա անշեղ առաջ կըն-

Թանար իր ընդգծած շաւզով։ Մինչև որ  
մարդիկ եթէ ոչ համակրիլ, գէթ երբեմն  
լսել սկսէին նրա կենդանի խօսքերին։

Իհարկէ, որքան կը որ փչացած լինի մի  
հասարակութիւն՝ դարձեալ նրանում կը  
գտնէին անհատներ — զիխաւորապէս շահա-  
գործող դասակարգէն, — որոնց համար հա-  
ճելի կը լինի շահագործողների գէմ ուղղւած  
բողոքի այս կամ այն կէտք։ Խոկ Պ. Թա-  
փառականին առաջուց այդպիսի անհատներ  
էին հարկաւոր, մինչև որ նա «Հասարա-  
կութեան մէջ ուտքի տեղ շինէր» . . .։

Ահա այդ կարգի անհատներէ մին էր և  
Մելիք Միսարի Արամ անունով որդին՝ իր  
Ճագահիր (Գոհար) քրոջ և համագիւղացի մի  
քանի երիտասարդների հետ։ Արանց թէն  
առաջին անգամ շատ խորթ, շատ տարօ-  
րինակ ու մինչև իսկ անիրազործելի ցնորբ-  
ներ երևան Պ. Թափառականի արծարծած  
մտքերն ու բոլոր քարոզութիւնները, բոյց  
ժամանակի ընթացքում յաճախ շփւելով նրա  
հետ և կամաց—կամաց ձանօթանալով նրա  
ներքին աշխարհին՝ սկսեցին հասկանալ նր-  
ան։ Խոկ նրան հասկանալ—կիսով չափ կազ-  
մակերպւել կը նշանակէր։

Այսպէս թէ այնպէս ուշադրաւ էր այն

երկոյթը, որ երբ Պ. Թափառականը մի քա-  
նի օրով կը բացակայէր Նաճարանէն՝ նրան  
համակրողները կոկուին անհանգստանալ։  
Եւ այդ բոպէներին էր, որ պարզ կերևէր  
աղատ խօսքի նրանց վրայ թողած հրաշալի  
աղդեցութիւնը . . .։

Նրանի թէն անտաշ, կոպիտ՝ բայց և  
թանկագին ատաղձներ էին, որոնցմէ հմտու  
վարպետ Պ. Թափառականը պիտի շինէր  
ապագայում խիստ տոկում, նպատակայար-  
մար գործիքներ՝ հասարակական կեանքի  
խախուս շէնքը վերանորոգելու, պիտանի  
զարձնելու զործում անհրաժեշտ եղող։

Բալու քաղաքէն և շրջակայ շատ հայա-  
քնակ զիւղերէ աւելի բաղկաւոր էր Նաճարան  
զիւղը, որտեղ Պ. Թափառականը կարողա-  
ցաւ իրեն ոտքերին համար տեղ շինել՝ հա-  
մեմատաբար աւելի կանուխ և աւելի լայն  
ծաւալով։

Այս, բաղգաւոր էր Նաճարան զիւղը և  
այդ կը տեսնենք մենք Քիւրտ Պէկի պատ-  
մութեան ընթացքում . . .։

## VII.

Երեկոյեան մեղ ծանօթ հարցուփորձէն  
մի օր յետոյ ՄԵԼԻՔ Միսաքը կանչեց իր  
մօտ Արամին-իր որդուն և պատփրեց, որ  
քրգերին իր հետ զաշտ տանէ և զրսեցի  
բանուրների կարգին գործի դնէ, որ աշ-  
խատին :

— Հայրիկ, ասաց Արամը՝ մի քիչ մը-  
տածելէ յետոյ, — եթէ ես լինէի քո աեղը՝  
չի ընդուներ այդ քրգերին և իսկոյն կը հե-  
ռացնէի մեր զիւլէն :

— Ինչու, Արամ:

— Հենց այնպէս...

— Բայց, սիրելիս, չընդունելու մի պատ-  
ճառ պէտք է,

— Բաւական է, որ զրանք քրգեր են,  
նրանց թէկուզ ծառայութիւնը շատ թանգի  
կարող է նատել մեղ վրայ իմ կարծիքով...

— Բայց մի մոռանար, Արամ, որ զրանց  
չ'պէտք է զասել իսկական քրգերի կարգը,  
որովհետև սրանք հայկական ծագում ունին  
և վաղ թէ ուշ պիտի ձուլին մեղ հետ...  
Պիտք է պահպանել այլպիսիներին...

— Իսկ իմ կարծիքով զրանք նոյնքան  
և աւելի վտանգաւոր քրգեր են, որքան բուն  
քրգական ծագում ունեցողները, սրովհե-  
տե « գինուց գարձած քացախը բարկ կը լի-  
նի . . . » կըտեսնե՞ս ենիչըրիներին, ինչե՞ր  
կանեն, — զրանք էլ հայեր, կամ յոյներ,  
մի խօսքով քրիստոնեաներ են, իսկ այժմ  
գարձել են մի-մի զերեղման քրիստոնէական  
պատի....

— Որդի ճա՞ն, շատ ճշմարիտ կասիս,  
բայց Վերտան-Զատէները ակամայ տոհմա-  
փոխների առաջին սերունդն են: Այդ պատ-  
ճառով էլ նրանց կեանքում դեռ շատ բան  
կայ հայկական... Մեր կողմէն մի փոքր  
ինամատարութիւն ու սիրալիրութիւն բաւա-  
կան կը լինի, որ նորամուտ բոլոր գծերը  
կերպարանափոխին զրանց կեանքում և  
աեղի տան հայկականին... Հասկանալի՞ է  
այդ հանգամանքն էլ թէ չէ...

— Չեմ կարող համաձայնիլ քեզ հետ,  
հայր, որովհետև եթէ կամենանք նշանա-  
կութիւն տալ հայկական սովորութիւնների  
մնացորդներին քրգերի կեանքում, հազիւ թէ  
կարելի լինի մատնացոյց լինել մի քրոն  
վրայ, որի կեանքը, մեծ թէ փոքր շափով  
հայկական զրոշմ չկրէր իր վրայ, մինի դա-

նախկին, թէ տասներորդ սերունդը — միեւնոյն է...

— Կարծ կապենք, Արամ, — փոխեց Մելիքը խօսակցութեան եղանակը, — ինչ էլ լինի՝ ես վճռել եմ պահել զրանց։ Ուրեմն, գնա՛, և ինչ որ կասեմ՝ արա՛...

— Ինչպէս մինչև այսօր՝ նոյնպէս և այժմ պատրաստ եմ կատարելու քո հրամանները։ Բայց կը մտածեմ, թէ մի՛ դուցէ յետոյ զըլշանք, որ ապերախտ օձերին տաքացրել ենք մեր ծոցում։

— «Քիւրտն իր խմած աղբիւրի ակը բար չի ձգեր», այդ առածը Մելիքը այնպիսի մի շեշտով արտասանեց, որ Արամին միայն հնազանդել կը մնար։

Վերջինս հոգւով չափ տիրած՝ շշնչաց.

— Հայր, ահա կերթամ պատւրդ կատարելու, սակայն թոյլ տուր վերջին անգամ նկատել, որ դա ոչ-ցանկալի հետեանք պիտի ունենայ...

— Կորսւէ՛ ներկայութենէս... շուն-շան-որդի...

Գոռաց Մելիք Միսաքը սաստիկ բարկանալ Արամի վրայ, որ կը համարձակէր յամասիլ իր կարծիքին վրայ։ Միթէ այդ կողմերում հայ երիտասարդն իրաւունք ունէր

սեպհական կարծիք ունենալու և նրան պաշտպանելու, միթէ ներելի՞ էր որևէ է երիտասարդ զաւկի, որ «զիմազարձութիւն անէր իր հօր խօսքերին դէմ» . . . Ոչ! ինչպէս այժմ, նոյնպէս և հնումը այդ կողմերում հայ-երիտասարդութիւնը այս կամ այն հարցում որ և իցէ ձայն ունենալու իրաւունքին զուրկ էր։ Եթէ, զիցուք, հայրը որդուն զըրկէր զետք՝ խղղւելու համար — որդին պարտաշորէր անտրտոնչ (ըստ նրանց՝ «առանց զիմազարձութեան») կատարել այդ անմիտ, կորստարեր հրամանը...

Այդ պատճառով էլ, քանի զեռ Պ. Թափառականին համակրողների թիւը սահմանափակ կը մնար, Արամն ակամայիցս պէտք է հնազանդէր...

Եւ նա լոեց և գուրս գնաց հօր մօտէն...

### VIII.

Պէտք էր տեսնել, թէ որքան ուրախացան Սայիտն ու Ռէսօն, որքան օրհնեցին Մելիք Միսաքի օրն ու արևը, որքան «օ-

քիւրտ Պէլ չատ» թ.

զորմիս կարգըցին Մենծ Մելիքին մեռձը-  
նուն, ճինսին ու սիլսիլելին հսկուն», —  
երբ Արամն յայտնեց նրանց, որ զործի պի-  
տի դրւին իրենց միւս բանւորների կարգին,

— ԱՇ, աղա, չոգուգ զուրպան—զոչե-  
ցին երկու եղբայրները միաբերան, — մենք  
վարձատրութիւն չենք խնդրեր, բաւական է  
փորերս կշտանայ և «անչուլ» չի մնանք: Եւ  
նորա վեր առին հարկաւոր զործիներն ու  
զնացին զործի:

Հաղա աշխատելը: «Մէյմէկ գահրիման  
էին կարած»: Այնպէս եռանդով, անդով և  
անձանձորով կաշխատէին, որ «տեսնողը  
լեզուն կը խածնէր»...

Առաւտուն, կէսօրին և յետինքին (իւ-  
քինտի), երբ միւս բանւորներն հացի կը  
նստէին՝ մեր հերսոները զեռ մի քիչ էլ  
կաշխատէին, ապա կը նստէին և զարձեալ  
միւռներին վաղ վեր կը կենային զործի  
զուփի: Շատ անզամ էլ «յետինքի հացին»  
երբէք չին նստեր նրանք, այլ կամ մի պա-  
տառ ցամաք հաց առնելով՝ միաժամանակ  
թէ կուտէին և թէ կաշխատէին, և կամ  
«Մենք անօթի չենք» ասելով զործերն ան-  
ընդհատ կը շարունակէին:

— Մեր տղայ, շարժիր—կասէր Սայիտը

իր եղբօրը՝ երբ առանձին կը մնային, —  
«գործին կրակ հանէ», որ կեավուրների աշ-  
քը բաց մնայ...» Այնուէս անենք, որ այդ  
անհաւատ քավլթառը (Մելիք Միսաքը) ու-  
տով—ձեռքով կպչի մեզ... Մինչև որ «ջուրն  
առուն իյնայ...» Այնուհետև հեշտ կը լինի  
մեր բանը, այնուհետև կը զիտենանք մեր  
անելիքը... Այնուհետև կեցցեն Փափաղ—  
ողլիների բռունցքները...

— Այո՞ շարժինք — կը պատասխանէր  
Ուկոն հեղորէն, — որպէս զի մեր տէրը (?)  
հանի ու զովէ մեզ, որ մեր նման բանւոր  
կեռ մտած չէ իր տոննը...

## IX.

Եւ, իրօք, «կեավուրների աշքը բաց կը  
մնար» (կը զարմանային) տեսնելով՝ քրգերի  
հոգւով—սրտով զործի նայելը: Մելիք Մի-  
սաքը միշտ հիացած կը պատմէր իր խօսա-  
կիցներին, որ կէսկէսների նման հալալ աշ-  
խատող ոչ մէկը չունի իր հարիւրաւոր բան-  
ւորներին մէջ:

Քրդուհին էլ անգործ չէր մնար : Նա մեծ եռանդով կը մասնակցէր զեղջկուհիների բուլոր գաշտային պարապմանքներին :

Լամուզները, հօ, Աստուծոյ խնամքին էին յանձնած : Մինչև իրկուն բաշ կը գային աղբակոյտերին վրայ, խոճկորների նման, և երեկոյեան ուշ ժամանակ տուն վերապանալով՝ Մելիքենց սեղանի փշրանքներով (որով մի քանի տասնեակ մարզիկ կարող էին կերակրուել) փորերը կը կշտայնէին ու «չարտախի» մի անկիւնում կողք-կողքի տւած կը խոմիացնէին, առանց ամենենին տեղաշնորի կարիք զգալու : Նոյն իսկ նրանցմէ մին ամենամեծը — հօտաղներին հետ անտառ կը գնար և կօդներ նրանց : Այդպէս ութ հոգուց բազկացած այդ ընտանիքը ոչ ոքի վրայ մաղաչափ բեռ չէր լիներ : Բացի այդ՝ Մելիքին որևէ վարձը ստանաէ էլ հրաժարեցան :

— Զեր հոգին սաղ մնայ, կասէին Մելիքին, — Հերիք է, որ ձեր տան յարկի ներքեւ ապաստան կը գտնենք և անօթի ու մերկ չենք : Աւելին չենք ուզեր :

— Այդպէս բան չիլինիք, ասաց Մելիքը — «Բանւորը պէտք է իր աշխատութեան վարձն ստանայ լիովին, որ գործին ու ար-

դիւնքին մէջ էլ պէրէքէթ (լիութիւն) իյնայ» : Չէ, որ եթէ դուք չլինէիք՝ ձեր տեղ պէտք է ուրիշներին վարձէի և հախերը տայի, ուրեմն անհրաժեշտ է, որ դուք ընդունիք նախորոշ վարձագներդ : Խնձմէն առէք ու, տարէք, թէկուզ, ծովը նետեցէք, — այդ ձեր գործն է, միայն՝ շասեն թէ Մելիքը Միսաքը աղբատ մարդոց «հախը կերաւ...

— Մենք մեզ լիովի վաճառքած կը համարինք, երբ ձեր մպառն զէմբին կը նայինք և երբ կը տեսնենք, որ դուք ոչ որպէս «աղա», այլ որպէս հայր կը նայիք մեզ ու մի բանի կարօտովթեան մէջ չէք թուներ մեզ :

— Բայց եթէ վճռել եք-կաւելցնէին նոքա, — որ անպայման զրամով էլ վարձարեք մեր աննշան աշխատութիւնը՝ ապա կը ինպենք, որ մեզ համնելիք զրամը զանձէք ձեզ մօտ : Թող աւելանայ : Մինչև որ մի առանձին զործի ձեռնարկելու համար բաւականաչափ զրամագրով զոյանայ, այն ատեն կամնենք և ձեր շնորհիւ մի փաքրիկ սեփական զործ կսկսինք :

— Այդպէս կարող է լինել, կը համաձայնէք Մելիքը և սրտանց կուրախանար, որ ապագայում հալալ աշխատանքի ձեռնարկելու կը տրամադրւին քրդերը :

— Այդ լաւ նշան է, կը մտածեր նա, — ընդ ամենը երկու տարի է, ինչ սրանք մաել են ինձ մօտ, և հասկացել են արդէն՝ հաւլալ աշխատանքով, ճակտի քրտինքով հաց ճարելուն առաւելութիւնը, փոխանակ գողութեան և աւազակութեան հետամուտ լինելու...

Մելիբի կարծիքով Արամը շատ-շատ կը սխալէր, կարծելով թէ՝ այդ քրդերը միայն ձախող հանգամանքների բերմամբ համակերպել էին արդի գրութեան հետ. թէ ստիպւած էին նորա համակերպելու, թէ երբ «Հանգամանքները կը բարեփոխէին» նրանք պիտի զառնային սոսկ աւազակաբարոյ քըրդեր... Բայց ինչ էլ լինէր, այժմ ակներե էր այս բանը, որ քրդերն ամենալաւ բանւորներ էին և «ոչ ոքի հաւին քըշշէին ասեր»։ Մելիքին էլ այդ էր հարկաւոր՝ համոզւելու համար, թէ զրանք աեղի պիտի տային սիստմաթիք մերձեցման և, վերջապէս, պիտի ձուլէին հայերի հետ... Այդ պատճառով էլ նա, Մելիքը, ամեն կերպ կաշխատէր գուր գալ փափաղ—օղիներին, գրաւել նոցա սրտերը և միով բանիւ այս համոզման բերել նրանց, որ ինքը՝ Մելիքը՝ պատրաստ էր օգնելու նրանց, ե՛րբ, ինչով և ի՞նչ կերպ էլ համենային քրդերը։

Միայն թէ՝ Մելիբի երազն իրականաւուր...

## X.

Փափաղ—օղիների ծառայութեան երբորդ տարւայ գարնան մի օր Սայիար ներկայացաւ Մելիք Միսաքին և ասաց նրան.

— Ուզ, քեզ զուրպան, կը ինողը նըք որ մի քանի օրավար հազ տաս մեղ վարձու, որպէս զի մեղ համար առանձին մի գործ սկսինը և մի կտոր հաց ճարենք։

Եթէ գիտենայիք՝ որքան ուրախացաւ Մելիքը Միսաքը, լսելով քրդու խնդիրը։ Նա կը տեսնէր, որ այդ 2-3 տարւան ընթացք քրդերը անմիջական շփման մէջ լինելով հայերի հետ՝ խորապէս ազդել էին նրանցմէ և այժմ ինքնարերաբար հող կը լինդին, երկրագործութեամբ պարապելու համար։ Եւ նա գառնալով քրդուն՝ ասաց.

— Շատ լաւ, Սայիա, վաղը ես կը կարգադրեմ ամեն բան։ Քիւրտը հեռացաւ խոր գլուխ տալով։ Իսկ Մելիքը կանչեց իր մօտ Արամին և ասաց.

— Տեսա՞ր, որդի՛ քեզ չէ՞ ասեր, որ այդ քրգերը վերջիվերջոյ պիտի զգան հաւալ հացի քաղցրութիւնը և ձեռք պիտի քաշն իրենց վատ կրցերէն:

— Ի՞նչ կայ որ, հարցուց Արամը դառնութեամբ՝ գուշակելով հօր հաղորդելիքը:

— Այսօր Սայիթը մի քանի օրավար հող կը խնդրէ՛ առանձին գործելու համար...

— Եւ դու էլ խոստացա՞ր, այնպէս չէ՞, միջահատեց Արամը՝ ամբողջ մարմնով դուզալով...

— Յիմար պիտի լինէի, որ մերժէի... Ի՞նչպէս կարելի է չուրախանալ և չկատարել նրանց խնդիրը, երբ կը տեսնեած մարզիկը կուզեն իրենց պարէնիկն հայթայթել մակտի քրատինքով... Շատ չանցած՝ դու կը տեսնեած, թէ ինչպէս կը հապատանան նորա իրենց աշխատութեան պառովներով և կը ձգտին կենդանի օրինակ հանդիսանալ իրենց նման շատերին առջև... Ու այդ ամենի պատճառը մենք եղած կը լինենք...

— Ախ, հայր, հայր, շնչաց Արամը, խոր հառաշելով, — կը տեսնեմ, որ քո ծայրայեղ լաւատեսութիւնը մեղ պիտի անքաղցնել... Ախար ես չեմ կարող հաս-

կանալ՝ այդ քրգերն ինչնի արժանի են մեր կարեկցութեանը, որ մենք պէտք է սիրով տեղ տանիք նրանց ու զուտ հայաբնակ մեր զիւղի սահմաններում մի քիւրտ ընասանիք պատսպարենք... Գուցէ նրանց հայացնելու երամզն է քեզ սկսորովը... Ա՛հ, թող մենք գիտենանիք մեր հարազատաներին օտարութեան ճիրանը չըձըգել, — այդ բաւական կը լինի մեղ համար... Կամ միթէ քի՞չ կան մեզ զանում այնպիսի անարատ հայեր, որոնք աղքատութեան զրկում հոգիները կաւանազն... Մենք թողած այլպիսի հարազատ արինակիցներին անզութ ճակատագրի կամ քի՞ն՝ կուզենք մեր արինը ծծող բարբարոսներին բարիք անեկ: Մեզ պէտ չեն, հայրիկածն, պէտք չեն այդ քրգերը...

— Զմոռանամ այս էլ ասելու, աւելացրեց նա, — որ դու գուցէ ի նկատի ունիս նրանց աշխատանիրութիւնը, որ գործա այս երկու տարի է լաւ կաշխատին մեղ մօտ: Սակայն պէտք է գիտենալ, որ նորա ստիպւած էին այրպէս լինելու...

— Ի՞նչու էին ստիպւած:

— Ահա թէ ինչու: Նախ որովհետեւ նըրանք քիւրտ ցեղերին զիմել չկին կարող, քանի որ «զաւածանի» որպիքն են, որոնց

սպանելու սրբազան պարտականութիւն կիյ-  
նայ մէն մի ճշմարիտ քրդու վրայ (քրգերի  
օրէնքն է այդ, որ զու ինձմէն էլ լաւ զի-  
տես): Երկրորդ՝ ուրիշ հայ գիւղերէ յոյսե-  
րը կտրած էին, որովհետև ո՞ր հայ գիւղն  
էլ մտան՝ վրնտեցան (այդ բանը Ճավահիրն  
իմացել է Սայիփի կնոջմէն): Երրորդ՝ այդ  
քրգերն համոզւած էին, որ քո ձեռքի տակ  
մնալով ու լաւ աշխատելով՝ մի օր պիտի  
օգտուին քո զիւրախաբութենէն և իրենց հա-  
մար մի հաստատուն զիրք պիտի ստեղծէին,  
որմէ յետոյ, ես համոզւած եմ զրանում,  
ցայց պիտի տան մեզ իրենց ընդարսոյս կըր-  
քերը...

— Բայց, Արամ, եթէ երբէք ես չափա-  
զանց լւատանս ու զիւրախար եմ, զու էլ  
չափազանց կասկածու և ամեն քունն ու  
պուճախում յետին մտքեր որոնող բնաւորու-  
թիւն ունիս... Ուրեմն պէտք է միջին ճա-  
նապարհն ընտարենք...

— Ի՞նչ կը նշանակէ «միջին ճանա-  
պարհ», ընդմիջեց Արամը:

— Այս, որ պէտք է կանչել մեր զիւղի  
խելահասներէ այնպիսի մէկին, որը վիճելի  
հարցում ոչ մի մազաշափ շահ կամ վնաս  
չունենայ, և նրա խորհուրդին զիմենք:

— Այս խելացի առաջարկութեանդ գէմ  
չեմ ես սկզբունքով—եթէ երբէք ներելի է  
Նամարանցի երիտասարդին սկզբոնքի տէր  
լինել, — սակայն վիճելին մի այնպիսի հարց  
է, որ իմ կարծիքով, ոչ թէ մազի՝ այլ Մա-  
սիս սարին չափ վնաս ունի մեր զիւղի իւ-  
րաքանչիւր մարդուն, որով ոչ մի՝ կարգին,  
զիւղի օգտաւը մտածող մարդ մեղ խորհուրդ  
չիտար պահել այդ քրգերին մեր հայաբնակ  
զիւղի սահմաններում:

Բայց... Մելիքն, յանկարծ, զգաց, որ  
ինքը գլուխ կը զնար զարաւոր սրբազործւած  
սովորութեան՝ իր որդու «Խօսքը չւանի զնե-  
լով» (կարծիքը յարգելով): Դա սրբազորւ-  
թիւն էր, իրաւ որ...

Թէկ միւս կողմէն Մելիքը կզար, որ  
երիտասարդների կարծիքն էլ, զատոզութիւն-  
ներն էլ կարող էին երեխն բանի պէտք  
գալ: Սակայն ցաւալին այն էր՝ ըստ Մելի-  
քի, որ «այդպէս ձայիլ—ձուշուշի խօսքը ըլու-  
նի զնելով՝ առիթ կուտանք համագիւղացի  
երիտասարդներին ըլբոստանալու և ինքզինք-  
նին մեծ—բանի տեղ սեղելու»...

Եւ նա զարձաւ Արամին այս խօսքերով.

— Այժմ և եթ զնա՛ զաշտ և միջակ  
հողերէն 40 օրավար տեղ ընտրէ Փափաղ

օղիներին համար, որոնցը մին հետզ կուզայ: Առվորական գինը յայտնէ նրանց, որ այսչափով կը վարձւի տարեկան մի օրավար միջակ վարելահող: Ազա այդ 10 օրավար հողի շորս կողմը նշաններ անկերպ՝ կը վերադառնաս ինձ մօտ:

Մելիքն այնպիսի վճռական շեշտով արտասանեց վերջին խօսքերն որ Արամը բանի էութիւնն իսկոյն հասկացաւ ու սրտի մօրմաբամբ գուրս գնաց հօր մօտին: Նա բըրդերէն մին հետո առնելով՝ զաշտ գնաց եր հօր պատւէրը կատարելու:

Իսկ Մելիքը զեռ երկար կը մտածէր իր ծրագիրների վրայ և երբեմն էլ կը յիշէր Արամի այդ օրւայ յայտնած մաքերը:

— Գէշ շասեր տղան — կը մտածէր Մելիքը Արամի մասին, — Բայց շատ է միակողմանի և երկշոտ, այնպէս որ կը կարծէ, թէ մի քիւրտ ընտանիք կարող է մնասել ամբողջ 300 տուն հայ ունեցող Նաճարան զիւղին... Մինչդեռ եթէ այդ բնտանիքը իր բոլոր էութեամբ կրակ էլ լինի՝ Նաճարանի մի մագն էլ չէ կարող խսնձել... Իսկ անզին իմ ծրագիրները... Ո՛չ. Նա զետ երեսայ է: Ես զիտեմ իմ գործը...

## XI.

Միւս օրը քիւրտ ընտանիքը Մելիք Մեսաքնց անէն փոխազրուեցաւ զաշտ և որոշւած 40 օրավար վարելահողին վրայ մի գետնափոր խրճիթ շինելով՝ սկսեցին բնակւել այնտեղ:

Երեք տարւան ծառայութեան ընթացքում քրգերը բաւական մեծկակ մի գումար էին յետ ձգել, որով նորա սկսեցին հոգալ իրենց անհրաժեշտ կարիքը: Նախ Մելիքէն գնեցին մի զոյզ եղ ու մի արօր իր պարագաներով՝ վարձած հողերն հերկելու համար: Ապա մի կթի կով՝ «Հացի թացան» ունենալու համար: Նրանց կը պակասէին երկրագործական մի քանի ուրիշ՝ նահապետական, ամենասպարզ զործիներ-ցաք, մանզադ, փետատ. երկժամկետ են, — որոնք ձբիքաբար ձեռք բերին ողորմած Մելիքի անէն: Այնուհետեւ մեծ եռանդով ձեռք զարիկն զործի:

Բաղզը կը ժալտար նրանց և նոքա օրըստօրէ կը բարւոցէին իրենց անտեսական վիճակը: Այնպէս որ՝ յաջորդ գարնան նոքանչ միայն ուրիշին չէին կարօտեր այս կամ

այն երկրագործական առարկային համար, այլ և վարձած հողերը կրկնապատկելու կարիք զգացին։ Այժմ արդին 3—4 քիւրտ ծառաներ ունեին նոքա և մի զյու եղի փռխարէն 3—4 զյու...

Մի առաւօտ Սայիտը զիմեց Մելիք Միսարէն և խողրեց, որ որոշ ժամանակով 20 օրավար էլ հող տայ իրենց վարձու։

— Մելիք, կասէր Սայիտը, — «Աստրւած սազի լինի ձեզմէն»։ մենք ձեր շնորհիւ մի պատառ հալալ հացի տիրացանք և, երիի, դեռ երկար պիտի վայելենք ձեր հայրական խնամքն ու շնորհները... Տեսնելով որ՝ հերու գործերս յաջող գնաց և մշակած ծխախոտներս լաւ արդինք տւաւ, երկու եղբայր խորհրդակցելով որոշեցինք՝ այս տարի մի քիչ ընդարձակել գործերս։ Այդ պատճառով եկել եմ ձեզ մօտ խնդրելու, որ մեր վարձած հողին կից եղող հողաբաժններէն 20 օրավար էլ տեղ տաք մեզ վարձու, որով «շատ-շատ շնորհակալ կը լինինք»։

Մելիքը կատարեց նրանց այդ խնդիրքն էլ։ Այդ տարի նոքա 30 օրավար տեղ մըշակեցին և անտեսական ու նիւթական նաև խանձելի վիճակի տիրացան, այնպէս որ՝ Նահարանցի հայերը կը զարմանային, որ

այդքան կարճ ժամանակում քրգերն իրենց համար մի լաւ ապագայ պատրաստեցին։ Ոչ-պակաս կը զարմանային նոքա և այն բանի մասին, որ քրգերն այդ տարում ձեռք բերին մօտ 50 զլուխ եղ, կով, գոմել, էլ ևն ու նամարանին սահմանակից թողիւ զիւզի կորդ բլուրներէն ու անտառներէն մեծ տարածութեամբ տեղ վարձեցին՝ իրենց կենդանեացը արածեցնելու և անտառի փայտերէն օգտուելու համար։

Միւս կողմէն էլ «կէս-կէս» քրգերի թիւը գնալով կը շատանար Սայիտի շորջը. և այդ որբան կուրախացնէր, ի հարկէ, Մելիք Միսարէն, որը համոզւած էր, որ փափազ-օղիներէն ազատելով «Խորթութեան» ճիշրանիներէն՝ ճամբայ էր բացած կէսկէններին առջև։ Երա հաշով շատ ժամանակ չէր հարկաւոր — ընդ ամէնը 5—10 տարի միայն, — որ հարիւրաւոր բանի քրգացած ընտանիքներ ընտելանային հալալ աշխատանքին և ձուլւելին իրենց նախկին արինակիցների-հայերին հետ... իսկ այդ նպատակին հասնելու համար Մելիքը պատրաստ էր զոհելու ամեն ինչ — ստացւածք, զրամ, տուն-տեղ... թիւուզ այնուհետև իր փարթամ գերզաստանը մուրացկանութեան դուռը բաղիւէր։

Այդ ոչինչ։ Միայն թէ՝ Մելիքի «մերամբ տեղը գար» (նպատակի իրազործումը տեսներ)։

Այդպէս է Բալուցի հայը։ — Նա շատ գժւար կը համոզի մի բանում։ Բայց համոզւելին յետոյ էլ նպատակի իրազործման ընդունակ է զոհելու ամեն ինչ։ Զոհ պահանջող գործը չի արասփեցներ Բալուցի Հային։

Երանի թէ խելացի, սիրտ շահող առաջնորդ-գործիչ ունենար Բալուցին և թեակունէր ճշմարիտ գաղափարականութեան կեանը քին ասպարէղը։ Այն ատեն զուք կը տեսնէիք Բալուցի Հայի անսպարտելի կուրծքն ու ախոյեան ճակաաը։ Այդ մասամբ ցոյց աւա Բալուի Հայի երիտասարդութիւնը — ինթելլիկենցիան իննանական թւականներին։

Ով բաղդ է ունեցել կարգալու մի ժամանակ Զորբարդ Հայքում հրատարակուող «Դատ» Հայաթերթը՝ նա կը հասկանայ ինձ։

Բայց մենք շատ հեռացանք մեր նպատակին։ Դասնանք, ընթերցո՞ղ։

\*  
\* \*

Այդ տարի աշնան՝ մօտ 50 քրդեր եւ կան «կօկտէրէ կոչող զիւղախմբէն», որտեղի քրդերը նպանպէս Հայեր էին մի ժամանակ և որոնք՝ անտանելի հարստահարութեանց պատճառով՝ ստիպեալ քրդացան և կազմեցին կօկտէրէցի կոչող հայակեր, արիսնախանձ «քիւրտ ցեղը»։

Սայիտը սիրով ընդունեց նրանց իր մօտ և Թովսէի անտառներում տեղ տւալ նրանց, որպէս զի ածիսագործութեամբ պարապին։

Բայց ի՞նչ ածխազործութիւն, մարդոց աշքին թուզ փշելու համար էին հնարել այդ անունը, բայց իսկապէս, զբազւած էին գողութեամբ, աւազակութեամբ, քրդուն յատուկ ալան-թալանով։

Նկատելի էր արդէն, որ Սայիտն ու Ռեսօն էլ առաջւան «աշխատազները» չէին։ ծովացել էին։ Երեկի խեղձերը յոդնել էին, ինչ արած։

Հողի գործը, կարելի էր տաել, բոլորովին յանձնել էին 5—6 քրդերի, որոնց լիազօր-վերակացուն էր Զիւլֆիխար անոնով մի գեղեցիկ և քաջարի տղամարդ, որին իր

աղջիկը կնութեան տալու միտք ունէր մեր  
Սայիւը և այդ պատճառով էլ բարձրացրել  
էր նրան:

Զիւֆիխարը թէև այնքան էլ հմուտ չէր  
իրեն յանձնւած գործին մեջ, սակայն շնոր-  
հիւ իր խոհեմ, քաղցր, «վարւեցող» բնա-  
ւրութեան՝ այնքան սիրելի էր զարձել նա-  
մարանցիներին, որ սրանք իրենց աչքի լոյ-  
սին պէս կը սիրելին նորան: Գիւղացիք, որ-  
պէս հմուտ հողագործներ, ցոյց կուտային  
Զիւֆիխարին, թէ ինչպէս անելու էր՝ այս  
ինչ արտում այն ինչ բոյսը լաւ աճեցնելու,  
լաւ արդինաւորելու համար և այլն:

### XII.

Որքան որ քրոկերը «կը բարւոքէին իրենց  
անտեսական վիճակը», ինչպէս կատկը Մե-  
լիքը, այնքան ալ կաւելանար Արամի և  
նրա համախոհների արտօնչը՝ Մելիքի և  
«Գեղի Մեծաւորներին» վէժ:

Բահն այնտեղ հասաւ, որ մի կիւրակի  
օր քսանի չափ երիտասարդներ հաւաքւեցան

Նաճարանի վերե «Թողոյենց» կոչող բըլ-  
րին վրայ, որ ծածկւած էր պաղատու ծա-  
ռերով ու թիւերով: Այդտեղ էին, ի միջի այ-  
լոց, և Արամի ու իր քոյրը՝ Ճափահիրը:  
Նորա հաւաքւել էին, որ խելք-խելքի տան  
ու մտածեն, թէ ի՞նչ անելու է, որ քրոկերը  
Նաճարանի սահմաններում բոյն չիկնեն ե  
եղածներն էլ հեռանան:

— Շատ ցաւալի է, կատէր Արամը, երբ  
ամենքը մէկտեղ գալով՝ պարտիզի մի ան-  
կիւնում էին արգէն, — որ իմ հայրս ա-  
ջինը եղաւ, որ Քըրմըցի քրոկերի նախ իր  
մօտ ծառայութեան ընդունեց և ապա նրանց  
վարձու հող տւաւ... Հօրս օրինակին հե-  
տեցան և Թօսիւցիք ու այդ քրոկերին յանձ-  
նեցին բաւական ընդարձակ տարածութեամբ  
անտառներ, 20 տարւան պայմանաժամով...  
Այդպիսով քրոկերն հաստատեցան երկու զուտ  
հայրնակ զիւղերի սահմաններում և օրըս  
տօրէ կաւելացնեն իրենց ցեղակիցների թիւն  
այդ տեղերում: Այժմ մօտ 400 հոգի են  
դրանք և կարող են մօտիկ յառաջիկայում  
այդքան էլ աւելանալ... Զեղ կը հարցնեմ,  
սիրելի հայրենակիցներ, ի՞նչ պիտի լինի  
ինեղն զիւղացիների զրութիւնը, երբ գրանք  
վերջնականապէս կը հաստատին Թօսիւէի

անտառներում և, ձեռք քաշելով հողագործութենին, որ խորթ զբաղմունք է իրենց համար կոկորդն բացարձակապէս պարապիլ ալան-թալանով...

— Ի՞նչ կը լինի-կը լինեց թաթուլը՝ Մելիք Տէրտէրի որդին, — այն կը լինի, որ Նաճարան և Թոփէ հայաբնակ դիւզերը կը դառնան ծառեր, իսկ քրդերը — ապակականիչ թրթուրներ այդ ծառերի արմատներում...

— Ներեցէ՞ք, պարսններ, նկատեց մի ուրիշը, — կարծեմ այդպիսի տիտուր գուշակութիւններ անել կարող է իրաբանչիր մարդ, որ ընկունակ է զիտելու։ Իմ կարծիքով յառաջաբանների կարիք չ'կայ, ուկար է վճռել մեր անելիքը։

Ինչպէս թէ « կարիք չ'կայ », զիմեց ձավահիրը, — գուցէ կան այստեղ զանուղների մէջ այնպիսիներ կը, որոնք, քեզ պէս ասեմ, « տիտուր գուշակութիւններ անելու » տրամապիր չեն... Պէտք է նախ լւա ճանչնալ շարիքը և ապա գնալ նրա գէմ...

— Պէտք է ճանչնալ, այո՛, շարիքը — կրկնեցին միւսները, բացի 4—2—էն, որոնք շատ կը չուզեցին վիճել օրիորդի կարծիքին գէմ, որովհետեւ ձավահիրը մեծ յարսանք

կը վայելէր այդ զիւղի բոլոր, այսպէս ասսած, երիտասարդաց կողմէն և նրա խօսքն էլ միշտ մտածւած էր՝ նպատակայարմար, ըմբոստ, « ազատ » խօսք և միշտ կը կշուննեցող երիտասարդների տչքում։ Եւ այդ ամենը չնորհիւ Պ. Թափառականի։

Գեղեցիկ ձավահիրը, հակառակ իր հօրոսպասածին, իր եղբօրը և Պ. Թափառականի ու մի քանի ուրիշ ըմբոստ երիտասարդ՝ հայրենակիցների բարոյական ազգեցութեան տակ զարձաւ մի՛ բողոքող, պահանջող, անվարեցող էակ։ Դրանով թէն ձավահիրը տուժեց իր վարիը « մեծերին » առջն, սակայն միւս կողմէն շահեցաւ ամբողջ « մտածողների » սէրն ու համակրանքը։ Նա լինելով երեսը պատռած — ինչպէս կասեին այդ կողմերում խլրտացողներին — մի բացառութիւն Նաճարան զիւղի համարեա ամբողջ հայուհիների մէջ, նա ահճնատուր եղաւ իր արիւնակիցների « միօն ոսկորէն զատող պայմանների » բարեփոխութեան գաղափարին, որ ծնունդ կը առած Վասպուրականի սահմաններէն բարձրացող գաղափարական Հոսանքէն և Պ. Թափառականի անդպում բարողութիւններէն...

ձավահիրը չէր կարող զսպել իր արդար

զայրայթն այն գէպքերում մանաւանդ, կը լը տեսնէր, որ երիտասարդ—մատածովների խուլ բողոքն ու հոգեբուզիս քարօղները կ'ոչչանան մի անհատի — մեծաւորի մի ակնարկով:

— Ախար ինչո՞ւ է այդ այդպէս, կը հարցնէր նա ինքնիրեն սրտատոշոր եղանակով: Եւ հալումաշ անող, ուզեղ ու կուրծք կրծող այդ հարցին դէմ յամաօրէն կը ցցւէր դարաւոր սարկութեան զրօշմած մահացու կնիքը՝ հասարակական կենցաղին վրայ, ուրի շնորհիւ անհատի բռնանալլ ամրող համայնքների և նոցա ուղեղին վրայ — սրբագրութել էր...

— Ախ... Գազաններ, — կը գոչէր նա դժւածի նման, — մինչև ե՞րբ պէտք է մարդկութեան բաղդի կծիկը հուպ տաք բռերումկ... Անհատներ...

Մինչգեռ, որ աւելի ցաւալին էր, այդ կարգի անհատներէ մէկն էլ իր հայրն էր, որ հաւանելով միայն իր խելքին՝ սիրով ընդունեց իր ծացում և տաքացրեց նրանց — օձ—քրգերին... իսկ այդ երեկոյ ծառայք—քրգերը՝ այսօր տիրանալով նիւթական մի պատկառելի զիրքի՝ կամաց—կամաց ցոյց կու տային իրենց կիճը, յորում այնքան

թոյն կար, որ կարող էր մահ առթել ամբողջ հայ համայնքների...

Ճավահիրը չեր կարող մսոացութեան տալ Սայիտի այն խննէշական, լոգիրը հայեացըները, երկդիմի խօսքերը, որոնցով կը զիմէր իր տիրու աղջկան և որով կը վիրաւորէր Ճավահիրի սրբադան զգացմանըները...

— Ահ! Որբան գեղեցիկ ես, Ճավահիր! կասէր մի անգամ Սայիտը, — երանի այն տղամարդուն, որ կը տիրանայ քեզ...

Այդ խօսքերը լսելէ յետոյ Ճավահիրն զգաց, որ շուտապ վրայ կը հասնի՝ քրգերի համար խօսքի սահմանէն գործի անցնելու շրջանը:

Այն ատեն... Եւ եթէ մինչ այդ Ճավահիրը բացարձակապէս չեր «Լոյս ինկել», չեր յայտնել իր տեղուհութիւնը՝ ափող հասարակական կարգերին դէմ: Եթէ մինչ այդ նա մասամբ «անյարմար էր գտատած» այդ կողմերու իգական սեպին յատուկ սպանիչ ամօթիւածութեան սահմանէն գուրս զալը: — Այդ խօսքերը լսելէն յետոյ նա ժայի շունեցաւ այլևս լոելու... Առաջին անգամ նա յղացաւ միաբը՝ մի տեղ հաւաքւելու և փրկութեան ճանապարհի վրայ մտածելու: Նա այդ միաբն յայտնեց իր եղբօրը և թաթուլին: որոնց

Նա կը սիրէր իր բոլոր էռոթեամբ։ Վերջինս  
ներս նպատակայարժմար գտան օրիորդի ա-  
ռաջարկութինը և խմբւեցան այդտեղ։

— Եղբայրներ, կասէր ձավահիրը, —  
Պէտք է լաւ ուսումնասիրել, թէ այդ քըր-  
զերն ինչու ինչ եղանակով կը վասան մեղ,  
և այնուհետեւ պէտք է ուշի ուշով հետեւնք  
նրանց իւրաքանչիւր շարժման, որպէս զի երբ  
նրանք կ'անցնին սոսկ կապալառական ի-  
րաւունքների սահմանէն՝ իսկոյն և եթ նկա-  
տենք այդ և կարուկ եղանակով զգուշա-  
ցընենք... Պէտք է միաժամանակ այնպէս  
շարժել որ ոչ մեր մեծերի կատարեալ ցա-  
սումը շարժենք մեզ վրայ, որով մի կողմը  
շինելիս միւս կողմը քանդած կը լինինք, և  
ոչ էլ քրգերին թոյլ տանք, որ կոմիկուտեն  
մեր իրաւունքները, մեր պատիւր... .

Բայց ժաղովականները չ'կարսղացան շա-  
րունակել իրենց վիճարանութինները և  
ստիպւեցան զիւղ իջնելու։ Որովհետեւ այդ  
միջոցին զիւղում մեծ իրարանցում ինկաւ  
և անսպասելի մի աղմուկ բարձրացաւ։ Պէտք  
էր շտապել զիւղ և իրարանցումին պատճառն  
իմանալ։

## XIII.

Մի ժամ յետոյ պարզւեցաւ ինպիրը, որ  
հետեւեալն է։

Մելիք Միսաքի Հայ բանւորներէ մին  
զրանէ մէկ-երկու ժամ առաջ հրաման կըս-  
տանայ Մելիքէն՝ գաշտ գնալ և ջրել բամբակի  
արտերը։ Այդ օր ջրի հերթը Մելիք Միսա-  
քենցն էր։ Ծառան գաշտ կերթայ և կը տես-  
նէ, որ Սայիտի ծառանները առի ամբաղջ  
ջուրը կապել են իրենց՝ քրդերին պատկա-  
նող՝ արտերին վրայ։ Հայ բանւորը կարծե-  
լով, թէ Սայտի նորեկ ծառանները ջրի հեր-  
թապահութեան կանոններին անձանօթ լի-  
նելուն պատճառով սխալմամբ են արել, —  
ջուրը կը գարձնէ իրենց բամբակնացին վը-  
րայ և կըսկսի սոսողել։ Բայց շանցած կէս  
ժամ՝ ջուրը կը կարի։ Բանւորը կըշտապէ  
«Ջրբաժանի տեղը» և կը տեսնէ մի քիւրտ  
բահը ձեռքում կը հսկէ։

— Այդ ջուրն ո՞վ է գարձնել ձեր կող-  
մը, քիւրտ, կը հարցնէ Հայը։

— Ես, կը պատասխանէ քիւրտը և կը  
պատրաստի մեկնիլ զէսկի արտը,

— Բայց ինչու ես դարձրել, տո՛, զու  
չ'զիալի՞ր միթէ, որ այսօր ջրի հերթը մերն  
է և բացի մեզմէն ո՛չ ոք իրաւունք չունի  
օգտելու:

— Դու ՞ւմ շուն ես...

Մելիքի ծառն մաղաշափ անդամ ցաւ  
չ'զգաց «շուն» մակիրէն, որովհետեւ քրդե-  
րը սովորաբար հայերին — մանաւանդ սառ-  
րին զասակարգին — շուն կը կոչեն: Քրդու-  
լեզում «Քուդրքան ամե» (շուներ եկան)՝  
կը նշանակէ «Հայեր եկան» են...

— Ես Մելիք Միսաքի ծառն եմ, ա-  
սաց բանուրը մի առանձին հպարտութեամբ.  
— իմ տէրն հրամայել է ինձ այդ ջրով ջրել  
իր արտը:

— Իսկ Սայխո Պէկը, այսինքն իմ և  
ձեր ամենքի տէրը, հրամայել է ինձ այդ  
ջրով սոսկել ի՞ր արտերը:

— Ի՞նչ, ի՞նչ... ի՞նչ Սայխո Պէկ է,  
տո՛... Պէկս որն է, լամուք... Գեռ հրէկ  
էր՝ փորերդ վեց-վեց կանէր՝ այսօր պէկ  
էր դառձել զլսիս...

Բայց Մելիքի համարձակախօս ծառան  
չ'կարողացաւ շարունակել, որովհետեւ քրդու-  
րահը շողշողաց... և հայը, պատռած զըլ-  
խով, արնաթաթախ փուեցաւ զետին...

Ահա այդ գէպքի լուրն էր ճամբորզների  
միջոցաւ հասել Նածարան զիւղը, որ մար-  
զիկ այնպէս իրար էին անցել: Ոչ ոք չէր  
ուզեր հաւատալ իր լսածին, թէն ամենքը  
բաց աչքով կը տեսնէին Հայ բանւորին կի-  
սամեռ զբութեան մէջ, ժամի զրանն ինկած...

#### XIV.

— Բայց ո՞վ էր այդ «Սայխո Պէկը»,  
կը հարցնէ, զիտեմ, ընթերցողը:

— Գա հէնց ինքը՝ Սայխոն էր—մօտիկ  
անցեալում Մելիք Միսաքի ողորմելի ծա-  
ռան, տարիներով անտուն—անտէր թափա-  
ռող խեղճ քիւրաը...

«Քիւրտ Պէկի» Ա. Հատորիկէն արգէն  
զիտեն ընթերցողները, որ Բարձրագոյն հրա-  
վարտակով (ֆէրման) Պէկութեան տիտղոս  
շնորհւեցաւ Քըրմըցի քիւրտ ցեղի ցեղապետ  
Փափաղ—Օզիկ Ալի աղային և նրա ժառանգ-  
ներին որդւոց—որդիկ: Մենք զիտենք նոյն-  
պէս, թէ որքան սուզի նստեցաւ Փափաղ—  
օզիկների վրայ այդ ողորմելի տիտղոսը, որի

շնորհիւ Ալի Պէկը «Գաւաճան» քստմելիի  
մակղիրը զրօշմեց իր ճակատին և որով  
պատճառ զարձաւ մի ամբողջ ցեղի (Քուր-  
մի) կոտորմունքին ու նոյն խակ իր գերզառ-  
տանի ջնջման։ Ինքը՝ Ալի Պէկը, զեռ չ'հա-  
սած իր բաղձայած փաշայութեան, ինկաւ  
պատերազմի դաշտում՝ իրենց անկախու-  
թիւնը հերոսարար սրով պաշտպանող քըր-  
տերի ցեղապետին...

Ալի Պէկի սպանելէն ասդել էին  
տասնեակ տարիներ։ Փափաղ—օղլիների տոհ-  
մէն մեացած երկու շառաւիղները — Սայիսն  
ու Ռէսօն, որ հազիւ հազ ճողովրած էին  
«գաւաճանի տոհմին արժանապէս վարձատ-  
րող» Տէրսիմցոց պատուհասող սրին և,  
սրպէս Փախստական, ապաւինել էին Մշելիք  
Միսաքի օճազը, — սրանք մի օր լոյս ին-  
կան Բալու քաղաքը։

Ներկայանալով ծերունի գաւառապետին՝  
Սայիսն ու Ռէսօն յայտնեցին նրան, որ  
իրենք «Պետութեան ուղուրին ամեն բան  
զոհող» Ալի Պէկի որդիքն էին։

— Ո՞ւր կը մնաբ այմը, հարցուց գա-  
ւառապետը, որ ինքը՝ տիրահոչակ Ռիւշտին  
էր։

— Գայմագամ էֆէնտի, պատասխանե-

ցին Փափաղ—օղլիները, — մենք որպէս գա-  
ւաճանի որդիք՝ չկինք կարող քրտերի մէջ  
մնալ։ Ուստի անցանք Աշմուշատի զիւղերը  
և այժմ կը մնանք Նաձարանում։

— Հըմ... Հասկանալի է... Բայց Հայե-  
րը ձեզ չեն նեղացներ այնաեղ։

— Ասենք՝ Հայերը չեն նեղեր մեզ, բայց  
եթէ նեղեն էլ՝ ի՞նչ կարող ենք անել, երբ  
մեր տէրը բոլորավին աշքաթող է արած մեզ  
և չի հաճիր մի բուլէ մտածել, որ մենք այն  
անձնաղոհ հերոսի որդիքն ենք. որն իր  
կենգանութեան ժամանակ իր գլուխը հզի և  
սրի ենթարկելով՝ կը նպաստէր Օսմ. Պե-  
տութեան զօրեղանալուն այս կողմերում...

— Տղաբս, զոշեց գաւառապետը՝ ախ  
քաշելով, — զուք մարդ կը լինիք... Բուրմ  
գիւղը ձեղ նման քաջեր միշտ ծնած է և  
կը ծնի... Լիայոս եղէք, որ ես ձեր մասին  
պիտի բարեխօսեմ, ուր հարկն է, և պիտի  
աշխատահմ, որ զուք տիրանաք ձեր ժառան-  
ցուրեանը... .

Երկու եղբայրները շնորհակալութիւն  
յայտնելով ստբի եղան և հրաժեշտ տւին  
իրեն «Հօր բարեկամին և նրա որդոց պաշտ-  
պանին»։ Ռիւշտի Պէկը մինչև բակի զուքը  
առաջնորդեց նրանց և Զեղ տեսնեմ, ասաց

վերջին բոսկին, — որբան կարող էք՝ զծլեցէք  
ձեզ շրջապատող կեաւութերին։ Թող նրանք  
դիմեն ինձ, որ բողոքեն ձեզ դէմ, որպէս  
զի մի քիչ էլ ես զնկմ և այնպէս զրկեմ.. .  
Եթէ դուք խելացի շարժեիք, շատ չանցած,  
կը վերստանաք ձեր Պէկութեան տիտղոսը  
և մի կերպ կը տիրէք Նաճարանին կամ մի  
այլ Հայաբնակ գիւղի . . . Միայն թէ աշ-  
խատեցէք, որբան կարելի է, ձեզ շրջապա-  
տել հաւատարիմ, զործունեայ և կարիճ քրր-  
դերով . . .

\*  
\* \*

Այնուհետեւ Սայիսն ու Ռէսօն զործեցին  
համաձայն զաւառապետի հրահանգների և  
սկսեցին ափ-աշկարա ըմբոստանալ։ Մինչեւ  
որ՝ մի օր զաւառապետի կողմէն եկած յա-  
տուկ պատգամաբերը յայտնեց Փափազ-օղի-  
ներին, որ արգէն Բալու քաղաքում ստաց-  
ւած է մի ֆէրման, որի շնորհիւ Սայիսն  
ու Ռէսօն պաշտօնապէս կոչւելու էին — Սա-  
յիս Պէկ և Ռէսուլ Պէկ։

## XV.

Զրւորների ծանօթ ընդհարումէն մի քա-  
նի օր յեսայ Մելիք Միսաքը Արամին զրկից  
Սայիտին մօտ, որ հրամայէ վերջինիս' ծե-  
ծել յանդուզն ծառային և անզայման վրոն-  
տել նրան Նաճարանի սահմաններէն։

Արամը գնալով քրդերի բնակարանը տե-  
սաւ, որ Սայիտը զիսին հաւաքած մի քանի  
տասնեակ երիտասարդ քրդեր՝ որինդ կա-  
ծէին և կովանտ (gövende) կը խազային<sup>1</sup>։  
Օք ուրբաթ էր, քրդերն այդ օր, որպէս  
մահմէտականներ, չէին աշխատեր։

Հաւնելով նոցա մօտ՝ Արամը տհաճու-  
թեամբ բարեեց քրդերին և կանգնեցաւ մի  
անկին, մինչեւ որ պարողները սաստիկ յոդ-  
նած-քրտնած վար նստան հանգստանալու  
և քիչ վերջը էլի շարունակելու։

Արամը կզգար, որ քրդերի մէջ տեղի է  
ունեցել մի մեծ փոփոխութիւն։ Որ առաջ  
քրդերը Մելիքենց տնին որ և մէկին տես-

<sup>1.</sup> Քրդական մի պար է այդ, նման լազերի  
թիրրեմի խօրօնի կոչուղ կոմը պարին։

նելիս ստքի կը կանգնէին, «պատիւ կա-  
նէին» և միով բանիւ կաշխատէին ցոյց առալ,  
որ իրենք մի ժամանակ Մելիքի ծառաներն  
են եղել և այժմ էլ նրա շնորհիւ մի կտոր  
հաց կուտեն։ Մինչդեռ այժմ՝ Արամի յայ-  
տընելը, բարեկը՝ երբէք բանի տեղ չի  
դրէն։

Այդ երեսիմը խոր խոցեց Արամի սիր-  
ալ...

— Ի՞նչ էր պատճառը — Հարցուց նա  
վերջապէս մօտ գնալով Սայիտին, — որ ձեր  
քիւրտ ծառան համարձակել էր զուր տեղը  
կուի բանել մեր բանուրին հետ և ի վերջոյ  
պատոել նրա վլուխը։

— Որովհեակ ձեր ծառան կը կամենար  
մեր արտերն անջուր թողնել, այդ պատճա-  
ռով էլ մէջերը մի փոքր զալմաղալ են սար-  
քել։

— Նախ՝ զուք իրաւոնք չոնէիք այդ  
օրւան ջրէն օգտակար, քանի որ ջրի հերթը  
մերն էր։ Երկրորդ՝ թէկուզ հերթը ձերն էլ  
լինէր, զուք պարաւոր էիք՝ ի պատիւ իր  
ծերունի հօր և ձեր տիրոջ զիջանիլ ձեր  
հերթը՝ վստահ լինելավ, որ հայրս կը գնա-  
հատէր ձեր այդ բարութիւնը և երբ և իցէ  
ձեր վնասը չէր կամենար։ Բայց զուք փո-

խանակ այդպէս վարւելու՝ ուզեցիք նոյն խոկ  
մեր հերթը խլել, ինչպէս որ խլեցիք էլ Եւ  
Մելիք Միամբի հայ բանուորի զլուկին անդամ՝  
պատուեցիք... — Արամը զիսմամբ շեշտեց  
վերջին խօսերն ու աւելացուց.

— Այդ յանդգիւթեան համար հայրիկո  
հրամայեց ինձ յայտնել ձեզ, որ այսօր և  
եթ այդ ծառան հեռացուի Նամարանի սահ-  
մաններէն։

Քիւրտը կզգար, որ պէտք է այդ բոպէին  
տեղի ունենայ մի մեծ փոփոխութիւն մինչե  
այդ տիրող յարաբերութեանց մէջ։ Որ պէտք  
էր առնել մի զնուական, խրոխտ քայլ։ Որ  
պէտք էր բարձրացնել իրենց Պէկութիւնը  
վարագուրող քողը... բայց ինքն էլ չ'գիտէր,  
թէ ինչո՞ւ այնքան զժւար կուզար իրեն առ-  
նել այդ քայլը, չ'նայած որ նա ոչ մի կաս-  
կած կամ երկիւզ չէր կարող ունենալ զի-  
մացինէն։

Անարգարութիւն գործել առաջ զդացւող  
խղճի խայթն էր այդ, որը սակայն մի բո-  
պէ յետոյ տեղի առա քրդան մէջ բոյն զրած  
Գաղանին... Եւ նա ասաց խրոխազին։

— Հայրդ կարող է շատ բան հրամայել  
և զուն էլ կարող ես յայտնել ինձ, սա-

կայն... այդքանով կը բաւականանալու պայմանաւ...

— Ի՞նչ ասել կուզես, չեմ հասկանար միտք? հարցուց Արամը դառնութեամբ:

— Այս որ՝ մեր ու ձեր ծառաները շատ էլ կարող են ընդհարւել միմեանց հետ և նորէն հաշտուիլ: Եթէ ես ու հայրը կամենք մէն մի ընդհարման համար բանակցութեան մտնել միմեանց հետ, — այդ զէպ քում պէտք է մի գատարան հիմնենք և ուրիշ գործի երբէք չնայինք... Ուրեմն իմ կողմէն բարեւ արա հօրդ և ասա, որ ծառաների գործը ծառաներին թողնելու է: Այսօր իմ ծառան ձերինի զլուխը կը պատուէ, վաղն էլ ձերը — մերինի՝ և գործը կը վերջանայ...

— Այդպէս բան չելինիք, Սայիտ, մենք չենք կարող ձեր հասկացողութիւններով առաջնորդւել: Դուք երբ կը գնաք Քուրմի սարերը՝ այնտեղ կարող էք գեկալքարւել ձեր «օրէնքներով»... Իսկ այժմ պէտք է պատմել և վճնտել յանցաւորը, որ ուրիշներն եղ զգուշանան և ընդհարութիւնների աելիք չ'տան երբ և իցէ:

— Բայց կարմէ, Արամ, որ այդպիսի մի չնչին զէպքի պատճառով մարդ իր հաւատարիմ ծառան վնասէ:

— Ինչպէս թէ չնչին զէպ, տօ՛, երբ անպարտ ծառայի զլուխը երկու կես է արած և տղան այսօր-վաղը կը մենի ։ ։ ։ Բայց թէ ձեր հասկացողութեամբ կարմէ թէ ոչ, — այդ չեմ ուզեր ես զիտենալ: Հայրս, որպէս յայտնի խաղաղասէր մարդ, որպէս և Նաճարան զիւղի Մելիք-գիւղապետն՝ յարամար է գատել և հրամայել է անպայման վոնտել այդ ծառային: Զեզ կը մնայ յարակել նրա հրամանը և կատարել կէտ առ կէտ:

— Զէ՛, Արամ, մեր օրէնքում զրւած չկայ, որ Միշալիւման Պէկը յարգէ և կատարէ մի Պիղծ կեավուրի հրամանը... Գնա և այդպէս էլ ասա քո հօրը, թող ինչ կուզէ:

— Եւ զու, անշնորհակալ քիւրտ, կը համարձակիս իմ հօրը կեավո՞ւր. անւանել, առանց միտք անելու, որ նրա՝ չնորհին է այսօր աղա ես գարձել և զեռ Պէկութեան էլ հովերով կը յախորտա՛ս...

Ասաց Արամը և մի քայլ առաւ դէպի ապերակս Քիւրտը... .

\*  
\* \*

Կատաղութենէն « ինքվնքը կուտէր » խեղճ տղան և չէր կարող հանդուրմել քըր- դու յանդզնութեան դէմ:

— Ի՞նչ կը նշանակէ այս, կը մտածէր նա, միթէ՞ մենք այնքան փոքրացած մարդիկ ենք, որ երեկան ծառան այսօր պէտք է ոտքի տակ մեր իրաւունքները և մենք պիտի համբերենք . . . Ել ինչու կապրինք, ի՞նչ կարմէ մեր կեանքը . . . մինչև Երբ « լը- սենք » և « լոենք », հա՞ . . . Ան, հու ես, Պ. Թափառական, արի' և հասկացր՛ւ մեր ծերերի փտած զլուփներին, որ լռութիւնը գերեղմանում պառկազներին է միայն ար- ժան, որ չնչող մարդիկ պէտք է կատարե- լագէս իրենց զլուի տէրը լինին . . .

Եւ հարցերը, հոգեմաշ հարցերը կը խոնը- ւէին նրա ուղեղում, որոնց պատասխանելու համար պէտք է մարդ ունենար մի քիչ և յարզը զիտենար այն բանին, որ մեր լեզ- ւում կը կոչչի Պատիւ . . .

Քիւրտը արհամարհանքով նայեց բորբոք- ւած, կրակ կարած Արամին և հրամայեց սրինդ ածող և միւս քրդերին, որ սկսին ընդհատած կովանտը . . .

— Քիւրտ, հօրս անունով կը հրամայեմ քեզ, ասաց Արամը՝ մօտ գնալով Սայհակն, — որ այսօր և եթ հեռացնես յանցաւոր ծա- ռային մեր սահմաններէն. բացի այդ, որ- պէս Մելիք Միսաբի որդին, կզաւշացնեմ քեզ, որ այսուհետև աչքդ չորս բանաս և միշտ հետեւս քո ծառաններին, որ անկարգու- թիւններ չանեն . . . Հակառակ գէպքում մեզ կոտիպես ամենքիդ հեռացնել Աշուշատէն . . .

— Լու՛, շուն հայ . . . ոչ թէ գու, այլ թէ կուզ քո Աստուածը չէ կարող հեռացնել ինձ այստեղերէն . . . Հիմա մայրդ . . . քոյրդ . . . հաւաքը . . .

Եւ հայհոյանքների տարափին հետ մի ուժին ապատի իջաւ Արամին:

— Խոսորնակին—Խոտորնակ, մոնչաց Ա- րամը և իր կապարեայ բոռնցքովը փշրեց հակառակորդին ատամները . . .

Պարը նորէն ընդհատւեցաւ և տամնեակ քրդեր վայրենի բացականիչութիւններով թափ- ւեցան Արամի զլուին, որպէս զի՞ որը փայ- տով, որը քարով, որը բռունցքը և որն էլ աբացին իտէալացնելով՝ տեղն ու տեղը սպանեն « նորելուկ » հային, որ նրա պիղծ հաւատակիցներն էլ իմանային, թէ ի՞նչ կը լինէր Միւսլիման պէկի գէմ յոխորտացող թշւառականի վերջը . . . \*

Բայց Արամը այնպէս շուտով կու գնացող պատառներէն չէր։ Նա մերկացրեց իր փոքրիկ, սիրունիկ, թունաւոր դաշոյնը, կանգնեցաւ բազմութեան կենդրոնում և զոչեց անյօդզողի ձայնով։

— Եթէ մինչև այսօր Հայ մարզը ստըրկական համբերատարութեամբ զոհւել է ձեր կրթերին, որոք այսօր իմ մէջ պիտի տեսնէք մի ուրիշ հայ, որ զիտէ զոհւել իր Պատմին համար և զիտէ իր հետ տանիլ այդ պատմի թշնամիներէն մի քանիսին... Շն, ուրեմն «տակը մնացողի հոգին զուրս գայ»...

Ուսո՞ն, որ մինչև այդ տաեն լուս հանցիսատես էր արող անցքին. երբ տեսաւ եղբօր վիճակը, — առիւծի նման վրայ պըրծաւ, ձեղքեց ամբոխը և մերկ դաշոյնով յարձակւեցաւ հերսոնին վրայ։

— Ով կը համարձակւի մօտենալ մեզ — զոչեց նա՝ դառնալով միւս քրոքերին, — նրա փորոտիքը զուրս կը թափեմ այս դաշոյնով... Մարզարէն վկայ է, որ չեմ խնայեր ալ էլ լինի... Թողէք այդ հաշիւը ես ու Մելիքաղնը մաքրենք... .

Եւ սկսւեցաւ զարհուրելի մենամարտութիւնը երկու քաջերի միջև։ «Քարը քարի զէմ էր առել»։ Երկու մարտիկներն էլ ճար-

պիկ բաներ էին։ Այդ պատճառով ամբողջ մի ժամ արին-քրտինքի մէջ լողացին նոքա։ Բայց կատարեալ յաղթութիւնը դեռ ևս անորոշ էր։

Կատաղի հանդիսատեսներէն մի քանիսը ատամները կը կրծացնէին իրենց սրտի զայրոյթին, բայց ինչ արած, «աղան հրամայել էր» չ'խառնւել։ Ուրեմն պէտք էր սպասել ելքին։

Ըստ երեսյթին վերջնական յաղթութիւնը Ուսոի կողմն էր։

Բայց «չ!»

Հայ հերոսը հիասթափեցրեց ամենքին։ Դիցաղն Ուսոն «Կեցցես, քաջ հայ» գոռաց և ուժասպառ փուեցաւ յաղթողի ոտքերին ներքեւ։ Նա իր արինով ներկեց այն անբազդ հողը, որի վրայ գարերի ընթացքում թափւել էր ստրուկ տաճկահայի անպարտ արինը...

Արամն էլ մի քանի տեղերէ թեթեակի վիրաւորված էր։

Այդ իսկ ըոպէին, երբ Ուսոն ինկաւ, վրայ պըրծան նրանց լրջապատողները և կամեցան ջարգուփշուր անել զարմանալի Հային, «նրա մարմնի խոշոր բըրդումը ականջները թողնել»։ Բայց այժմ էլ միւս աղան - Սաւորութեականը

յիտ Պէկը մէջ մուաւ և սաստեց ամբոխին, որ ցրւի՝ առանց ձեռք տալու « ազնիւ Երիտասարդին » :

Եւ Սայիտ Պէկը, իր ասպետական հոգու բոլոր անկեղծութեամբը մօտեցաւ Արամին և այսպէս խօսեցաւ հայ բառերով.

— Դու պէտք է ասպիս, քաջ Հայ, որովհետեւ քո երակների մէջ ճշմարիտ աշխրութեան (աղնւական) մաքուր արիւն կը հոսէ... Հայի հողը քեզ պէտ քաջեր շատ քիչ կը ծնի... Եւ եթէ այդ հողի հարազատ զաւակները չեն ընդունակ գնահատելու այդ հարազիւտ կտրիմների արժանիքը, — զիտացիր որ՝ աշեր քիւրտը զիտէ գնահատել քաջութինը, առանց երբէք հարցնելու, թէ ո՞վ է այդ քաջութեան տէրը... Այս ամենը տեսնելէ և լսելէ յետոյ գնա՛, ասա՛ քո հօրը, որ այսօր և եթ ձեր բանւորի զուուը պատող ծառաս կը հեռանայ ձեր հողին գուցէ և մեր աշխարհէն...

— Իսկ ես, շարունակեց նա խիստ յուղած ձայնով, — պիտի աշխատիմ հարազատ եղբօրս թանգագին արեան ամեն մէկ կամ թիլին փոխարէն մի—մի հայ զոհել... Օ՛ն, ուրիշն, Աստուած քեզ հետ...

Բառերը պերճախօս կին, բոլանդակութիւնը՝ խորիմաստ :

Մի քրդու—այն էլ ազնւական քրդու—բերնէ դուրս եկած այդ ծանրակշիռ բառերի բուն արմէքը շատ լաւ կը ճանչնար Արամը: Այդ պատճառով էլ քղանցքովը սրբեց արինոտ դաշոյնը, զրաւ պատեանին մէջ և հրամեշտ տալով՝ հեռացաւ քղերէն:

Սայիտ Պէկը ուղեկցեց նրան բաւական տեղ և անխօս ճամբայ ձգեց...

\*  
\* \*

Այդ անցքէն մի օր յետոյ Հայ—Բուշնկ թրքարնակ զիւղի մոլլան Ուէսօի սպանւած տեղումը թաղեց Ուէսօի և ջրոր քրդու մարամինները: Վերջինս Սայիտ Պէկի հրամանով գնդակահար եղաւ՝ Ուէսուզ Պէկի մեռնելէն 42 ժամ միայն յետոյ:

Սայիտ Պէկը չէր լար իր եղբօր վրայ, քանի որ նա վատարար չ'մեռաւ...

## XVI.

Եւ այնուհետեւ Կամաբան գիւղի 300 տուն Հայերը կորցրին իրենց երեսնի անդորրութիւնը:

Այսօր այս գիւղացու ծառան կը ծեծւէր,  
վաղը միտի աշքի լոյս եղը, ձին կամ զո-  
մէշը կը գողացւէր, երբորդի արտում խոտի  
կամ ցորնի գէզը կը հրձգւէր... Դա բար-  
բարսութեան առաջին և «ամենաթեթև»  
շրջանն էր:

Դրան յաջորդեց երկրորդը — մարդաս-  
պանութիւնները, որ կը պատահէին յաճա-  
խակի: Շատ չանցած՝ վրայ հասաւ և եր-  
րորդ ցնցող շրջանը — սրբազնծութիւնը...

Կ'աւերւէր, կը քանդւէր, տակնու վրայ  
կը լիներ մի ամբողջ Հայ զիւղ...

— Իսկ այդ ամենի զէմ ի՞նչ կանէր  
գիւղացին—ենթական, ի՞նչ զէնք կը գործա-  
ծէր, կը հարցնէ սիրելի ընթերցողը:

— Մի շատ հին, անզոր զէնք էր հայ  
գիւղացու ձեռքինը, ընթերցող ճան, — զիւ-  
ղացին աղօրք կանէր...

— Ուրիշ?

— Ուրիշ, ի՞նչ ասեմ... Կ'անիժէր Ա-  
րամին, որ «զնաց շանը պոչին վրայ կոխեց  
և այսօր շունը կը խածէ»... Այս, նա կա-  
նիծէր Արամին...

— Հազար Արամը, Պ. Թափառականը,  
նրանց ընկերները... — զուցէ կամենաք  
հարցնել:



— Կը պատասխանեմ, կը պատասխա-  
նեմ, սիրելի ընթերցողներս, բայց «Քիւրտ  
Պէկի» յետագայ հատորներում. համբերու-  
թիւնը լաւ բան է:



ՎԵՐԶ. Բ. ՀԱՏՈՐԻ



ՀՀ Ազգային գրադարան



NL0328795

27488

